

ԼԻՍԻՑՅԱՆՆԵՐԻ ՏԱՂԱՆՂԱՎՈՐ ԶԱՎԱԿԸ.  
ԼԵՎՈՆ ԼԻՍԻՑՅԱՆ\*

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Լիսիցյաններ, Լևոն Լիսիցյան, Թիֆլիս, Մոսկվա, Վիեննա, Յո. Ստրիգովսկի, Թ. Թորամանյան, կամավորական խմբեր, Պետրոգրադ, Ն. Մառ, Լ. Առեր, Կ. Պոլիս, Երևան, Սարիղամիշ, Էջմիածին, Հովհ. Թումանյան, Ավ. Իսահակյան, Ալ. Կուկերյակին, Կ. Բախչի:

Նախաբան

*XIX դարավերջի – XX դարի Հայ իրականության մեջ իր արժանավոր տեղն ունի Լիսիցյան գերդաստանը: Վարչավայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում բազմակողմանի ուսում առած Ստեփան Լիսիցյանը (1865–1947) Հայ մշակույթի մեծ երախտավոր էր՝ բանասեր, աշխարհագրագետ, ազգագրագետ, պատմաբան, մանկավարժ, հրատարակիչ, այդ թվում՝ «Հասկեր» մանկական ամսագրի հիմնադիր ու խմբագիր, Հովհ. Թումանյանի և Լ. Շանթի հետ «Լուսաբեր» մայրենի լեզվի դասագրքի կազմող, թարգմանիչ. հիշարժան է լեհերենից թարգմանած Հ. Սենկևիչի Հանրահայտ «Յո՞ երթաս» վեպը: Ստ. Լիսիցյանի կինը՝ Կատարինե (Եկատերինա) Լիսիցյանը (1863–1957), եղել է Թիֆլիսում հայոց երկսեռ գիմնազիայի հիմնադիրն ու տեսուչը, միաժամանակ՝ հասարակական գործիչ և հրատարակիչ:*

*Լիսիցյաններն ունեցել են երեք զավակ՝ երկու աղջիկ և տղա: Անգնահատելի է նրանց ավագ դստեր՝ ազգագրագետ, արվեստաբան Սրբուհի Լիսիցյանի (1893–1979) վաստակը պարարվեստի բնագավառում: Տակավին 1917 թ. նա Թիֆլիսում հիմադրել է Արտասանության, ուրիշի և պլաստիկայի ստուդիան, կից՝ պարի անսամբլ: 1930–1937 թթ. եղել է Երևանի նոր հիմնադրված Ռիթմի, պլաստիկայի և պարի տեխնիկումի տնօրենը, ապա դասավանդել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում: Աշխատանքի անցնելով ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում՝ տարիների ուսումնասիրության արդյունքում ստեղծել է «Հայ ժողովրդի հնօրյա պարերն ու թատերական ներկայացումները» երկհատոր հիմնարար մենագրությունը: Մյուս դուստրը՝ Նազելի Լիսիցյանը (1906–2005), տնտեսագիտության դոկտոր էր, Հայրենական մեծ պատերազմի վետերան, երկար տարիներ աշխատել է ԽՍՀՄ պետբանկի*

\* Ներկայացվել է 27. XII. 2021 թ., գրախոսվել է 23. II. 2022 թ., ընդունվել է տպագրության 03. III. 2022 թ.:

համակարգում, ապա՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի տնտեսագիտություն ինստիտուտում:

Լևոն Լիսիցյանի ուսանողական տարիները. գիտական գործունեությունը սկզբնավորումը

Հայրենիքի և հայ մշակույթի նվիրյալ էր Ստ. Լիսիցյանի որդին՝ ազգագրագետ, բանասեր, պատմաբան ու հասարակական գործիչ Լևոն Լիսիցյանը: Ծնվել է Թիֆլիսում 1892 թ. հունվարի 9-ին: Մանուկ հասակից փայլուն ընդունակություններ է դրսևորել ուսման մեջ ու երաժշտության ասպարեզում. ոսկե մեդալով ավարտել է Թիֆլիսի №1 գիմնազիան և գուգահեռ՝ տեղի երաժշտական ուսումնարանի ջութակի բաժինը: Ի դեպ, աշակերտական մի համերգի ժամանակ, երբ Լևոնը հանդես է եկել Մենդելսոնի կոնցերտի կատարմամբ, նշանավոր ջութակահար Հովհաննես Նալբանդյանը<sup>1</sup> բեմ է բարձրացել, գրկել պատանուն, շոյել գլուխը և ասել. «Դու իսկական ջութակահար կդառնաս, երբեք չթողնես ջութակը»<sup>2</sup>: Ականջալուր լինելով պատգամին՝ Լ. Լիսիցյանն երբեք չմոռացավ այդ գործիքը, շարունակեց ջութակ նվագել:



«Եկավ 1905 թվականը: Տպավորվող պատանին տեսավ մասսաների երթը, ինքն էլ նետվեց փողոց: Նրա աչքի առաջ կազակ հեծյալները հարձակվեցին Առաջին գիմնազիայի վրա և 22 գիմնազիստներ ... զոհվեցին: ... Այդ օրերին էլ նրա առջև մի նոր աշխարհ բացվեց՝ բանտը: Ընդամենը մի քանի օր նա մնաց ցարական բանտում, բայց մի ամբողջ դպրոց էր դա՝ կյանքի դասերով ու քննություններով, դառնություններով ու փորձություններով ... , – գրում է Մ. Հակոբյանը: – Գիմնազիան նա ավարտեց ոսկե մեդալով, բայց չստացավ այն. գիմնազիայի խորհրդի մի այլ որոշմամբ ոսկե մեդալները տրվեցին Գոգոլի արձանի կառուցման համար ստեղծվող ֆոնդին: Վայրկյան իսկ չափստաց նա դրա համար, չափազանց շատ էր սիրում Գոգոլին»<sup>3</sup>:

1909 թ. Լ. Լիսիցյանը մեկնում է արտասահման և ընդունվում Մյունխենի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետը: Մեկ տարի անց փոխադրվելով Մոսկվա՝ ընդունվում է տեղի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը: Եվ, սակայն, շուտով՝ 1910 թ., ուսանողական ցույցերին ու Յանայա Պոլյանայում Լև Տոլստոյի թաղմանը մասնակցելու համար, շատերի թվում հեռացվում է համալսարանից: Ձերբակալությունից խույս տալու և ուսումը շարունակելու նպատակով կրկին մեկնում է արտասահման: Նախ որոշ ժամանակ ապրում է Շվեյցարիայում՝ Լոզանում, հաճախ այցելում է իրենց ընտանիքի մտերիմ Լևոն Շանթին: Վերջինս 1910 թ. մարտի 26-ին Ստ. Լիսից-

<sup>1</sup> Հովհ. Նալբանդյանի մասին մանրամասն տե՛ս Ա ս ա տ ր յ ա ն. 2021, նաև՝ ՊԲՀ-ի սույն համարում նրա հոդվածը՝ էջ 26–48:

<sup>2</sup> Հ ա կ օ բ յ ա ն. 1964, 96:

<sup>3</sup> Հ ա կ օ բ յ ա ն. 1964, 96:

յանին գրում է. « ... Լևոնդ ... եկավ ... Առողջ է, ուրախ, հանգիստ եղիր: Աս մոտ չաբաթ մըն է՝ իր նոր պանսիոնն է, շատ գոհ է ամեն տեսակետե. մինչև անգամ մտադիր է ավելի երկար մնալու: Առաջ կ'ուզեր «ղալմաղալ» տեղ մը իյնա. ես, իհարկե, ոչինչ չըսի, պատանությունը իր պահանջներն ունի. բավական երկար որոնումներե վերջը ինկավ ընտանիք մը, որ թեև «ղալմաղալ» չէ, բայց ընտանիք է և լեզվի տեսակետեն բացառիկ հարմար: Մանրամասնությունները երևի ինքը կը գրե, այնպես որ, ըսել կ'ուզեմ, հանգիստ եղիր»<sup>4</sup>: Մարտի 30-ին էլ հայտնում է. «Ջավոն (Ջավո Ներսիսյանը Լ. Շանթի կինն է – Ա. Ջ.) ու Լևոնդ այս երրորդ օրն է գացեր են ժրնե. երևի այսօր-վաղը կը վերադառնան»<sup>5</sup>: Ապրիլի 18-ին Լ. Շանթը կրկին Ստ. Լիսիցյանին գրում է. «Անցած շաբթու ստացա ուղարկած 80 ռուբլիդ. Լևոնի հետ խորհուրդ ընելով հասանք այն եզրակացության, որ իրեն համար է ըլլալու այդ աննամակ, անորոշ ու անժամանակ գումարը: Լևոնը լավ է. հիմա ուշ-ուշ կուզա մեզի, խրվեր է իր պանսիոնին մեջը և որ գլխավորն է՝ շատ գոհ է»<sup>6</sup>:

Լ. Լիսիցյանը, հավանաբար, 1910 թ. վերջերին մեկնում է Ավստրիա և 1911–1914 թթ. սովորում Վիեննայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում: Այստեղ նա չփվում է Մխիթարյան միաբանության հայրերի հետ, պարապում նրանց գրադարանում, ուսումնասիրում հայկական մատենադրական աղբյուրները: «Իր բարեմասնություններով» վայելում է Մխիթարյանների համակրանքը<sup>7</sup>:

Երիտասարդ Լիսիցյանը բազմակողմանի զարգացած անձնավորություն էր, առանձնապես ընդունակություն է դրսևորում գիտահետազոտական աշխատանքների ոլորտում. հետաքրքրվում էր հայկական ճարտարապետության մեջ, սոցիոլոգիայով, աշխարհագրությամբ, տնտեսագիտությամբ: Տիրապետում էր մի քանի լեզուների. ազատ խոսում էր ռուսերեն ու գերմաներեն, գիտեր գրաբար, ֆրանսերեն, լատիներեն, անգլերեն, վրացերեն, ուսումնասիրում էր հունարեն, արաբերեն, նաև սանսկրիտ, թուրքերեն: Հետաքրքրությունների այդ լայն շրջանակով ու բանիմացությամբ համալսարանում գրավում է ավստրիացի հայտնի գիտնական, պատմության և ճարտարապետության պրոֆեսոր Յոզեֆ Ստրիգովսկու ուշադրությունը. վերջինս նրան հրավիրում է գիտահետազոտական աշխատանքի համալսարանին կից գործող Արվեստների պատմության ինստիտուտում, դառնում է հայկական մշակույթի հարցերով նրա խորհրդատուն: Յո. Ստրիգովսկին մեծ հույսեր էր կապում Լևոնի հետ. դեռևս 1913 թ. ասում էր, որ նրանից «գուրս պիտի գա ... eine tüchtige Wissenschaftliche Kraft» (մի կարևոր գիտական ուժ), և հայ ճարտարապետության տեսության ու պատմության մի շարք խնդիրների լուծումը

<sup>4</sup> Շ ա ն թ . 2017, 165: Ի դեպ, Լ. Շանթը Մյունխենից 1898 թ. դեկտեմբերի 7-ին Ստ. Լիսիցյանին գրում է. «Կը համբուրեմ և փոքրիկներդ, ո՞վ գիտե հիմա ինչպես մեծցած են չալ Լևոնիկը ու քոքեդ աղվորիկ Սրբուհիդ (ընդգծումը մերն է – Ա. Ջ.)» (Շ ա ն թ . 2017, 52):

<sup>5</sup> Շ ա ն թ . 2017, 167:

<sup>6</sup> Շ ա ն թ . 2017, 173:

<sup>7</sup> Տ է ր - Յ ա կ . 1922, 317:

կապում էր նրա հետ<sup>8</sup>։ Այս առումով ուշագրավ են նույն թվականի սկզբին ծնողներին Լ. Լիսիցյանի գրած նամակի հետևյալ տողերը. «Մի նոր աշխարհ է բացվում մեր պատմագիրների էջերից։ Հին Հայաստանի կյանքը դեռ կենդանի է նրանց մեջ և հարկավոր է միայն մի կարող ձեռք, մի հմուտ աչք, որ կարողանա ըմբռնել այդ հին, սրբազան, խորիմաստ և մութ տողերի մեջ՝ կյանքի շունչը, ժողովրդի հոգին և պատմությունը՝ նրա բազմակողմանի կողմերով, կենդանի գույներով և ամեն կյանքին հատուկ անբաժանելի ամբողջականությամբ։ Մինչև այժմ այդ դեռ ոչ ոք չի կատարել։ Բայց ես կարծում եմ, որ այժմ հասել է այդ ժամանակը, երբ հնարավոր է անել այդ»<sup>9</sup>։

Լ. Լիսիցյանը նպաստում է Յո. Ստրժիգովսկու և նշանավոր ճարտարագետ-ճարտարապետ Թորոս Թորամանյանի միջև կապերի ստեղծմանը. վերջինս «Տեկորի տաճարը» և «Էջմիածնի տաճարը» աշխատությունների իր կատարած գերմաներեն թարգմանությունների տեքստերը Ստրժիգովսկուն ներկայացնելը հիմք են հանդիսանում նրանց անձնական ծանոթությանն ու հետագա համագործակցությանը հայոց ճարտարապետությունը եվրոպային ճանաչելի դարձնելու գործում։

Գիտական արշավախումբը Հայաստանում. Լ. Լիսիցյանի ներդրումը հավաքված նյութերի մշակման գործում

Լ. Լիսիցյանի խորհրդով ու աջակցությամբ, հոր՝ Ստ. Լիսիցյանի ջանքերով հավաքված նյութական միջոցներով 1913 թ. ապրիլի 16-ին Թ. Թորամանյանը գալիս է Վիեննա։ Վերջինիս կողմից այդ որոշումը կայացնելու գործում, ինչպես ակնարկվեց, զգալի դեր է կատարել Լ. Լիսիցյանը, ով հույս է ներշնչել Թորամանյանին նրա աշխատությունները Վիեննայում հրատարակելու հնարավորության մասին։ Այդ առթիվ Լիսիցյանը 1913 թ. մարտի 7-ին Թորամանյանին գրում է. «... Պ. Ստրժիգովսկին շատ կցանկանար, որ Դուք գաք գոնե այս մի չորս ամսով Վիեննա, երբ հայկական գեղարվեստի վրա պետք է աշխատեն ինստիտուտի մեջ և Ձեր նյութերն էլ բերեք, որ այստեղ անշուշտ կարելի կլինի գործադրել գիտական ուսումնասիրությունների համար և թերևս հրատարակել։ Ստրժիգովսկին պատրաստ է ինստիտուտի բյուջեից 200 կրոն (որն անում է 80 ռուբլի) հատկացնել Ձեզ իբրև օժանդակություն և խնդրում է, որ գրեմ Ձեզ այդ»<sup>10</sup>։

«... Թորամանյանը հրավիրվել էր այնտեղի (Վիեննայի— Ա. Զ.) համալսարանին կից արվեստի պատմության ինստիտուտի պրոֆ. Յ. Ստրժիգովսկու կողմից՝ մասնակցելու նույն տարվա (1913 թ. — Ա. Զ.) գարնանային սեմինարին, որը նվիրված է եղել հայ-վրացական արվեստի ուսումնասիրությանը»<sup>11</sup>։ Թորամանյանը մասնակցում է սեմինարին՝ հայ ճարտարապետության վերաբերյալ իր ունեցած նյութերով։ «Սեմինարի ավարտումից հետո Թորամանյանին տրվում է արվեստի լավագույն աշխատության համար

<sup>8</sup> Հարությունյան. 1973, 98, Ղարիբջանյան, Վարդանյան. 1993, 54։

<sup>9</sup> Հակոբյան. 1964, 99։

<sup>10</sup> Թորամանյան. 2014, 442։

<sup>11</sup> Թորամանյան. 2014, 442։

հատկացված մրցանակը և պայմանագիր է կնքվում նրա հետ՝ սեմինարիաներ կայացրած նյութերով պատմական հայ ճարտարապետության վերաբերյալ Վիեննայում ուսումնասիրություն հրատարակելու մասին՝ պրոֆ. Ստրիգովսկու մասնակցությամբ»<sup>12</sup>:

Հայոց դարավոր ճարտարապետության պատմության ու տեսության իր խորունկ իմացությամբ՝ Թ. Թորամանյանը նաև որոշ ժամանակ պարապում է Արվեստների պատմության ինստիտուտում, խրախուսում, արագացնում է ինստիտուտի կողմից գիտական արշավախմբի կազմակերպումը և այցը Հայաստան:



Լևոն Լիսիցյանը հոր, մոր և քրոջ՝ Նազելիի հետ (ԹԻՖԼԻՍ):

Դեռևս հունվարի 17-ին Վիեննայից Լ. Լիսիցյանը ծնողներին հասցեագրած նամակում մանրամասն պատմում է իր մասնակցությամբ Հայաստան մեկնելիք հնագիտական արշավախմբի նպատակի և ուղերթի մասին. «Անգին հայրիկ և մայրիկ // Ճամփորդությունը սկսվելու է սեպտեմբերի 2–3-ից (մեր հաշվով), երբ Ստրիգովսկին և ուրիշները Թիֆլիս կհասնին, այնտեղից ես ու Թորամանյանը կմիանանք նրանց: Ամբողջ օգոստոս ամիսը ես ուզում եմ անցնել Թիֆլիս և պատրաստվել ճամփորդության, պարապելով մի ամիս գրադարաններում: Ճամփորդության գլխավոր նպատակն է՝ հնագույն ճարտարապետական հիշատակարաններ (ուսումնասիրելը – Ա. Զ.): Մարշրուտը որոշված է՝ Սանահնից սկսած – Ալադյազի շուրջը – Աբարանը մինչև էջմիածին, Գառնիչայ հովիտը մինչև Այրիվանք – հետո Բաքարան, Երվանդակերտ, Թալին, Թալիշ, Մաստարա – Ախուրյանի ձոր մինչև Անի և Ալեք-

<sup>12</sup> Թ ո Ր ա մ ա ն յ ա ն. 2014, 443–444:

սանդրապոլի շուրջը՝ մի իսկական մուգեյ է, ճարտարապետության բազմաթիվ չուսումնասիրված նյութ— սկսած 5-րդ (և մի երկու տեղ հին) դարից: Kittler-ը կկատարի ազգագրական, իսկ Hanslik-ը աշխարհագրական և Kultur (Հաջորդ մեկ բառն անընթեռնելի է) ուսումնասիրություններ: Լավն այն է, որ հենց նույն շրջանները նրանց համար էլ վերին աստիճանի չահավետ է: Ուրեմն, մենք շուտով կտեսնվենք»<sup>13</sup>:

Արշավախումբը, Ստրֆիգովսկու գլխավորությամբ, արվեստաբան, դոկտոր-պրոֆեսոր Հենրիխ Գյուլկի, ազգագրագետ Էդմոնդ Գյուտլերի, Լիսիցյանի մասնակցությամբ և թ. Թորամանյանի առաջնորդությամբ 1913-ի սեպտեմբերի 14-ից հոկտեմբերի 4-ը Հայաստանում զբաղվում է գիտական մի շարք հարցերի մշակումով: Նրանք այցելում են Ալեքսանդրապոլ, Մարմաշեն, Հառիձ, Քասախ, Աշտարակ, Եղվարդ, Գառնի, Գեղարդ, Էջմիածին և այլ վայրեր, ծանոթանում, լուսանկարում, չափազորում ճարտարապետական հուշարձաններ: Այդ ընթացքում Լ. Լիսիցյանը և՛ թարգմանիչ էր, և՛ վիմագրեր վերծանող: Հայտնի է, որ գյուղացիներից մեկի ուղեկցությամբ Գառնիից նա բարձրանում է Գեղամա լեռները և ուսումնասիրում Պայտասարի ժայռապատկերները, լուսանկարում ու արտանկարում դրանք, հավաքած նյութերի հիման վրա գերմաներեն հոդված պատրաստում<sup>14</sup>:

Նկատենք, որ Յո. Ստրֆիգովսկու ծրագրում, բացի հետազոտական ուղևորությունից, նախատեսվում էին նաև հրապարակային դասախոսություններ թիֆլիսում ու Բաքվում: Դրանց կազմակերպման գործում մեծ է եղել Լ. Լիսիցյանի և նրա հոր դերը: Ծրագրված դասախոսություններից թիֆլիսյանը կայացել է հոկտեմբերի 5-ին հայկական պատմական ընկերությունում հայ գեղարվեստի մասին, որն անմիջապես Լ. Լիսիցյանը թարգմանել է:

Հավաքված նյութերը Լ. Լիսիցյանը Վիեննայում սկսում է մշակել ու դասադասել: Այդ ամբողջ ընթացքում այնքան կարևոր ու ծանրակշիռ է եղել նրա ներդրումը դրանց գիտական մշակման գործում, որ հետագայում՝ 1918 թ., Վիեննայում գերմաներեն լույս տեսած «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» ծավալուն երկհատոր աշխատության տիտղոսաթերթի վրա Յո. Ստրֆիգովսկին՝ թ. Թորամանյանի և Հ. Գյուլկի անունների կողքին հիշատակել է նաև Լ. Լիսիցյանին<sup>15</sup>: Ինչպես հայտնի է, աշխատությունը խոշոր ներդրում էր հայկական ճարտարապետության ուսումնասիրման գործում, նրանում հետևողականորեն առաջ է քաշվում և հիմնավորվում հայկական ճարտարապետության ինքնուրույնության տեսակետը, որը մինչ այդ ժխտվում էր եվրոպական որոշ գիտնականների կողմից<sup>16</sup>:

<sup>13</sup> Էվոյան. 1973, 185–186: Ի դեպ, «Բանբեր»-ի տարեթիվը մի շարք աղբյուրներում սխալմամբ նշված է՝ 1972 (տե՛ս, օրինակ, «Ով ով է. հայեր: Կենսագրական հանրագիտարան», 2005, 482):

<sup>14</sup> Հոդվածը, որն այսօր էլ չի կորցրել իր գիտական նշանակությունը, Գ. Ա. Տիրացյանի թարգմանությամբ տե՛ս ՀԽՍՀ ԳԱ «Լրագրեր հասարակական գիտությունների», 1972, № 1, էջ 51–57:

<sup>15</sup> Լ. Լիսիցյանի, Յո. Ստրֆիգովսկու և թ. Թորամանյանի գիտական բովանդակային համագործակցության մասին տե՛ս Հայրենական. 1973, 89–104:

<sup>16</sup> Յո. Ստրֆիգովսկու աշխատության մասին առաջին ծավալուն գրախոսականը տե՛ս Գարեգին Եպիսկոպոս. 1922, 282–294: Նաև տե՛ս Арутюнян.

... Համալսարանական տարիներին Լ. Լիսիցյանը հանդես է եկել «Վրաց ճարտարապետությունը», «Հայ-վրաց պատմությունը» զեկուցումներով, համարյա ավարտին է հասցրել «Հայ ճարտարապետության պատմությունը» դիսերտացիոն աշխատանքը, գրել է «Նախապատմական գյուղերը Կովկասում», «Հայաստանի սոցիալ-կուլտուրական աշխարհագրությունը» ռեֆերատները, սեագրել է Հայաստանի բնակչության քարտեզը և այլն:

Միաժամանակ ունեցել է բազմակողմանի հետաքրքրություններ. զբաղվել է լուսանկարչությամբ ու սպորտով, հաճախել զեղանկարչության դասերի ... երբեք չմոռանալով ջութակն ու երաժշտությունը: Հայտնի է, որ Լ. Լիսիցյանը մասնակցել է Վիեննայում գտնվող հայ նոր պրոֆեսիոնալ կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրներից նշանավոր կոմպոզիտոր ու դաշնակահար Նիկողայոս Տիգրանյանի համերգին, նվագել «Շահնազ», «Լեկուրի», «Բինգյոլ», «Բյուր-օղլի», ուղեկցել կույր երաժշտին: «Մի շաբաթ զբաղված էի Տիգրանյանի փոքրիկ նվագահանդեսով, որին մասնակցեցի էլ»<sup>17</sup>, – գրում է նա 1914 թ. փետրվարին:

Հավելենք. երիտասարդ Լևոնը չըջապատի նկատմամբ ունեցած իր պարզ, անմիջական, պատրաստակամ շփումներով հարգանք ու հեղինակություն է ձեռք բերել, որի մասին կան խոսուեն վկայություններ: Այսպես, 1913 թ. հունիսի 11-ին Վիեննայից Թ. Թորամանյանը Ստ. Լիսիցյանին գրում է. «Ան-

1997, 93–102: Ի դեպ, Յո. Ստրիգովսկու աշխատությունը ուսերեն թարգմանությամբ հրատարակել է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը (հ. 1, գիրք 1, 2011, հ. 1, գիրք 2, 2018):

<sup>17</sup> Հ ա կ ո բ յ ա ն. 1964, 99: Հարկ ենք համարում հակիրճ անդրադառնալ Ն. Տիգրանյանի տեսողության կորստի և Վիեննայում ուսանելու հետ կապված որոշ մանրամասների: «Ինն տարեկան հասակում (ծնվել է 1856 թ. – Ա. Ջ.) ծաղիկ հիվանդությունը գրկեց ինձ տեսողությունից. տեղական բժիշկների և ծնողների բոլոր ջանքերն ապարդյուն անցան, և մանուկ հասակում ես գրկվեցի տեսողությունից, խոր սգի մեջ թողնելով ծնողներին և շրջապատին: Սակայն, ծնողներս իրենց հեռատես հոգատարությամբ որոնեցին և գտան մի այլ ասպարեզ: Հայրս Կովկասի մի խուլ անկյունում նստած (Ալեքսանդրապոլում – Ա. Ջ.), հետաքրքրվեց ու տեղեկություններ հավաքեց եվրոպայում գոյություն ունեցող կույրերի դպրոցների մասին, և Վիեննայի կույրերի կայսերական ինստիտուտը լավագույնը գտնելով 1873 թ. տարավ ինձ Ավստրիայի մայրաքաղաքը: Վեց տարի ես մնացի Վեննայի կույրերի ինստիտուտում և երաժշտական կրթությունից բացի (հայտնի պրոֆեսոր Վ. Շենների մոտ նա ստանում է դաշնամուրի դասեր, ուսումնասիրում երաժշտության տեսությունը, հարմոնիան և կոմպոզիցիայի հիմունքները – Ա. Ջ.) ստացա նաև լայն հանրակրթական ուսում, – «Իմ կյանքի ուղին» վերնագրում ուշագրավ հուշերում գրում է Ն. Տիգրանյանը: – Վիեննայում ես ապրեցի մի այնպիսի պատկառելի ընտանիքում, որն իր անջնջելի կնիքը դրոշմեց իմ ամբողջ կյանքի վրա: Դա պրոֆեսոր և կայսերական ինստիտուտի դիրեկտոր Պաբլասեկի ընտանիքն էր. պրոֆեսորն ուներ 6 մանկամարդ դուստրեր, որոնք զարմանալի պատրաստակամությամբ կարդում էին ինձ համար գերմանական լավագույն հեղինակների երկերը: Այս կիրթ և նուրբ շրջանում հղկվեցի ես և յուրացրի գերմանացու հատուկ մի քանի գծեր, որոնք կարևոր դեր կատարեցին կյանքիս և երաժշտական գործունեությանս ընթացքում» (Տիգրանյան. 1981, 52–53): Ն. Տիգրանյանի կյանքի ու գործունեության հետաքրքիր մանրամասների մասին նաև տե՛ս Թ. Երևանյան. 1936, М а з м а н я н. 1978.

շուշտ պ. Լևոնը Ձեզ կգրե իրերի դրուժյունը և իմ հույսերը աշխատութ-  
յուններու հրատարակության մասին շնորհիվ Սուշիգովսկիի նախաձեռնութ-  
յան և Ձեզ ու ինձ անհունապես սիրելի պ. Լևոնի անկեղծ ջանքերով: Ձեմ  
կարող կրկին անգամ շնորհակալությունս չի հայտնել Ձեզ պ. Լևոնի մասին, որ  
ծայրահեղ հոգածությամբ կմտածե ու կգործե իմ մասին: Եկան օրեր, որ անոր  
գոյությամբ միայն ես մոռանում էի շատ դառն ու անախորժ օրերու ցավը  
Վիեննայի մեջ: Պետք է խոստովանիմ, որ մի քիչ հանդուգն էր իմ ճանապար-  
հորդությունս՝ առանց լիակատար պատրաստության, սակայն պ. Լևոնը  
անզգալի դարձուց այդ հանդգնությունես հառաջ եկած նեղությունները»<sup>18</sup>:  
Բերենք մեկ վկայություն ևս. Լ. Շանթը 1914 թ. ապրիլի 24-ին Լոզանից  
Լ. Լիսիցյանին հայտնում է. «Սիրելի՛ Լևոն, չաբաթե մը գալու եմ Վիեննա.  
Մխիթարյաններու գրադարանը աշխատիլ կ'ուզեմ, կ'ուզեմ աչքե անցրենեմ  
ամբողջ արևմտյան գրականությունը, վստահ եմ, որ անոնք կ'ունենան, ինչ որ  
վերջին 50-ամյակին մեջ տպված է ... Ուրախ պիտի ըլլամ, եթե ստուգես այս  
կետը և ինձի անմիջապես տեղեկացնես: Հույս ունիմ նույնպես, որ որևէ  
ձևականության կամ դժվարության չեմ հանդիպելու իրենց գրադարանեն  
օգտվելու համար: Իսկ եթե բարի ըլլաս և ինձի համար աչքի առաջ ունենաս  
սենյակ մը մեկ ամսվան համար պարզ, բայց կոկ ու մաքուր, ո՛չ հեռու Մխի-  
թարյաններեն ու քաղաքի կեդրոնեն, որ շիտակ հոն իջնեմ, առանց կողմնակի  
ծախքերու՝ չափազանց շնորհակալ կ'ըլլամ քեզի: Մնացածը կը խոսինք, երբ  
միասին ըլլանք, առայժմ սրտանց ու կարոտով կը համբուրեմ քեզի»<sup>19</sup>:

1914–1915 թթ. Լ. Լիսիցյանի մասնակցությունը կամավորական  
խմբերի և Հայ գաղթականների եղբայրական օգնության կոմիտեի գոր-  
ծունեությունը

Երբ արդեն իսկ սկսվել էր Առաջին համաշխարհային պատերազմը, 1914 թ.  
օգոստոսի 9-ին Նոր Նախիջևանից Լ. Շանթը Ստ. Լիսիցյանին գրում է. «Լևո-  
նեն լուր ունի՞ս. անհանգիստ չըլլաս. հոս շատ-շատերն են քու վիճակիդ.  
Լևոնը խելոք տղա է, և հարկ եղած ժամանակ Մխիթարյանները կ'օգնին նրան,  
ինչպես և իր ինստիտուտը, թե փողով և թե այլ ամեն կերպով. հավանորեն  
հիմա Զվիցերիա է, և շատ ուրախ պիտի ըլլամ եթե խելք ըրած ու Զավոյի մոտ  
գացած ըլլա»<sup>20</sup>:

Սակայն ստեղծագործական ավյունով լեցուն Լ. Լիսիցյանը, անավարտ  
թողնելով գիտական աշխատանքները, գրքերը, ձեռագրերը, իբրև ուսա-  
հաստակ հարկադրված էր թողնել Վիեննան և օգոստոսի կեսերին վերա-  
դառնալ Թիֆլիս: Որոշ ժամանակ անց նա շտապում է Հայաստան. որպես կա-  
մավոր մեկնում է ուս-թուրքական ռազմաճակատ՝ նախ որպես 5-րդ, 1915 թ.  
2-րդ կամավորական ջոկատի զինվոր:

Հայ գաղթականներին օգնություն ցույց տալու նպատակով 1914 թ. դեկ-  
տեմբերին էջմիածնի Մայր Աթոռին առընթեր կազմակերպվում է Հայ գաղ-

<sup>18</sup> Թ ո Ր ա մ ա ն յ ա ն. 2014, 230: Ի դեպ, 1913 թ. հոկտեմբերի 2-ին Լոզանից Լ.  
Շանթը Ստ. Լիսիցյանին գրել է. «Լևոնը նորեն Վիեննա՞ է, հասցեն դրկե՛ մեզի»  
(Վ ա Ր դ ա ն յ ա ն. 1992, № 3, 131, Շ ա ն թ. 2017, 227):

<sup>19</sup> Շ ա ն թ. 2017, 234–235: Լ. Շանթի այցը Վիեննա, սակայն, չի կայացել:

<sup>20</sup> Վ ա Ր դ ա ն յ ա ն. 1992, № 1, 124: Հմմտ. Շ ա ն թ. 2017, 237:



Թականների եղբայրական օգնության կոմիտե: Այն ուներ իր ենթակոմիտեները Երևանում, Թիֆլիսում և Անդրկովկասի այլ վայրերում: Լ. Լիսիցյանը նշանակվում է կոմիտեի լիազոր-ներկայացուցիչ Բայազետում: Սկզբնական շրջանում նա իր գործունեությունը ծավալում է սահմանամերձ գոտում:

Դեռևս հոկտեմբերի 8-ին Հայ գաղթականների եղբայրական օգնության կոմիտեի անդամ, անվանի հայագետ, հոգևորական գործիչ Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյանին հասցեագրած նամակում Լ. Լիսիցյանը տեղեկացնում էր. «Թալիշյան քարերը տեղ են հասել: Առայժմ պահվում են ոստիկանության վարչությունում: Եթե Դուք ցանկանում եք դրանք տեսնել, ապա մի մերժեք վաղը այցի գալ մինչև օրվա ժամը 2-ը. լավ կլինի, եթե Դուք որոշեք դրանց ֆոտոպատճենները հանել, ես կօգտվեի նաև մեկ օրինակը Պետերբուրգի հնագիտական ընկերությանն ուղարկելու համար: Որոշ ժամանակից հետո այդ քարերը ես ուղարկելու եմ Կովկասյան թանգարան»<sup>21</sup>:

Հիշատակելի է նաև, որ դեկտեմբերի 5-ին «Թիֆլիսի Բնագիտական Ընկերություն» նիստում Լ. Լիսիցյանը զեկուցում է կարդացել «Հայաստանը Ֆիզիկական տեսակետով» թեմայով: Անհափ ուշադրավ, մինչ օրս իր գիտական արժեքը չկորցրած այդ զեկուցումն ավարտվում է հետևյալ եզրակացությամբ. «Հազիվ թե գտնվի մի այլ երկիր, որի աշխարհագրական դիրքը, տեղը ուրիշ երկրների մեջ և ներքին ֆիզիկական կազմությունը այն աստիճան, այնպես շեշտակի և անողորմ կերպով ազդած և ուղղություն տված լինեին նրա ազգաբնակչության բախտին, ինչպես Հայաստանում: Հայկական բարձրավանդակի ֆիզիկական կազմությունը հնարավոր է դարձրել նրա վրա մի այնպիսի մարդկային սոցիալական օրգանիզմի կազմությունը, որ ընդունակ է մշակույթ ստեղծելու և իր պատմությունը ունենալու: Խիստ որոշված աշխարհագրական անհատականությունը նրան ասպարեզ է դարձրել անհատական պատմության: Տեղագրության գծերն ու հատկությունները և ամբողջ ձևը արտացոլացել են պատմության մեջ, որը կարծես կոփվել, ձուլվել է աշխարհագրության կաղապարի մեջ»<sup>22</sup>:

1914 թ. դեկտեմբերի 30-ին Լ. Լիսիցյանը Գ. Հովսեփյանին հայտնում է Իգդիրից ռազմատրանսպորտային 40 փոխադրամիջոցով Հայ գաղթականների հիմնականում կանայք ու երեխաներ, տեղ հասնելու, նրանց տեղավորելու և սնունդով ապահովելու անհրաժեշտության մասին<sup>23</sup>:

«[30] հունվարի 1915 թ. [Ուլուխանլու]» թվակիր նամակով Լ. Լիսիցյանը ծնողներին հայտնում է գնացքով Իգդիր մեկնելու մասին. «Գնում ենք մեծ ծրագիրներով, կունենանք բազմաթիվ հանձնարարություններ և մեծ ասպարեզ գործելու ու մեր ուժերը գործադրելու»<sup>24</sup>: Իսկ արդեն «սահմանի այն կողմից» Արծալից, փետրվարի 9-ին նախ պատմում է ուղևորությունից ստացած տպավորությունը՝ գրելով. «Իգդիրից դուրս եկանք ... փետրվարի 6-ին.

<sup>21</sup> Էվոյան. 1973, 188:

<sup>22</sup> Լիսիցյան. 1922, 243: Այս զեկուցումը տարիներ անց գտնվել է Էջմիածնի գիտական ինստիտուտի անդամ, վաղամեռիկ Լ. Լիսիցյանի թղթերի մեջ և վերամշակմամբ նրա հիշատակին տպագրվել է Էջմիածնի գիտական ինստիտուտի «Բանբեր»-ում (տե՛ս Լիսիցյան. 1922, 234–243):

<sup>23</sup> Էվոյան. 1973, 188:

<sup>24</sup> Կիրիմյան. 1991, 147:

... Անցանք Օրջով (Օրգով – Ա. Զ.), Ձինգիլիժյաղուկը ու գիշերեցինք տաճկական նախկին մաքսատանը՝ Ղարեռում: Մյուս առավոտ հասանք Արծալի ... Երբեք չեմ մոռանա մեր վերելքը դեպի Ձինգիլ: Ձյուն էր գալիս, բայց օդը մեղմ էր, և մեր բախտից քամի չկար. մեր ձիերը հոգնել էին և դանդաղ առաջ էին քայլում: Թե որ պարզ օր լիներ, ամբողջ Արարատյան դաշտը կերևար մեր առջև, իսկ դիմացը՝ հեռվում, ահագին բարձրության վրա՝ Արագածի գագաթներն ու Ախմանջանը՝ ձյունով պատած. այս տեսարանը ես լուսանկարեցի մի քանի օր առաջ, երբ գնացել էի Օրջով: Բավականին տաք օրեր են. քամի չկա, երկինքը մի օր ծածկվեց ամպերով և հետո արդեն պարզվեց: Կապույտ երկինք, առանց մի ամպի, Բայազետի ընդարձակ դաշտը ձյունով ծածկված, որի վրա սևին են տալիս ճահիճները, սպիտակ Մասիսը, որը այս կողմից շատ ավելի ցածր է երևում (Բայազետի դաշտը մոտ 2500 ոտնաչափ բարձր է Արարատյան դաշտից) և Հայկական պարը, դեմ ու դեմ Ալ-դաղը և Պարսկաստանից բաժանող չղթան, մյուս կողմից էլ՝ Դիաղինից բաժանող լեռնաշղթան»<sup>25</sup>: Այնուհետև շարունակում է. «Մենք ... եկել ենք առայժմ գաղթականներին օգնելու և նրանց վերադարձը պատրաստելու գործով, ... սակայն մեր անելիք գործը շատ ավելի բազմակողմանի է. միջնորդ պիտի լինենք ժողովրդի և գինավորական իշխանության մեջ, հսկենք գյուղերի ապահովությունը և դրա համար ինքնապաշտպանություն և գյուղական մարմիններ կազմակերպենք, դատավորի դեր խաղանք, գաղտնի լրտեսի և պոլիցիայի դեր ստանձնենք (մասնավորապես քրդերի վերաբերմամբ), պաշտպանենք ու պահպանենք հայերի հողային ու շարժական սեփականությունը (մասնավորապես գաղթականներին), գաղթականների տները և գյուղերը ապահովենք քանդվելուց, աչքի առաջ ունենալով վերադարձը, որն անհրաժեշտ է»<sup>26</sup>:

Ըստ Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի թիկունքի պետ, գեներալ-մայոր Յուրիևիչի կողմից 1915 թ. օգոստոսի 25-ին Լ. Լիսիցյանի ինքնություն մասին տված վկայականի, նա, որպես հայկական 2-րդ ջոկատի կամավորական, գործողվել է Արևմտյան Հայաստանի կրկին վերանվաճված տարածքներ՝ վերականգնելու վերադարձող գաղթականների թալանված տնտեսությունները, ընդամին՝ կարգադրվել է այդ հարցում նրան աջակցել: Բացի այդ, վկայականում նշված է, որ նրան թույլատրվել է ինքնապաշտպանության համար կրել զենք և իր ենթակայության տակ ունենալ 10 զինված անձ<sup>27</sup>:

Լ. Լիսիցյանը լինում է Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում, ականատես դառնում ժողովրդին վիճակված ողբերգությունը՝ ամենուրեք գործադրելով օգնության անձնուրաց ջանք ու եռանդ:

Նկատենք, որ թեև Լ. Լիսիցյանը ծանրաբեռնված էր գաղթականներին օգնություն ցուցաբերելու ամենօրյա հոգսերով, այնուամենայնիվ, ժամանակ էր գտնում զբաղվելու հայկական մշակութային արժեքների ճակատագրով. հավաքում է ազգագրական բնույթի նյութեր, կատարում հայկական ճարտարապետական հուշարձանների վերաբերյալ համառոտագրություններ: Այսպես, վերը նշված փետրվարի 9-ի նամակում ծնողներին հայտնում է. «Երկու

<sup>25</sup> Կ ի Ր ի մ յ ա ն. 1991, 148:

<sup>26</sup> Կ ի Ր ի մ յ ա ն. 1991, 148:

<sup>27</sup> Է վ ո յ ա ն. 1973, 189:

Հնուկություն գտա այստեղ, որոնք ահագին արժեք ունեն մեր ճարտարապետության համար: Մեկը Արծափի եկեղեցին է, պատկանում է ամենահին շրջանին՝ երևի IV–VI դարի, 14 կողմանի, երկու մույթերի վրա, նարտեքսով (բյուզանդական տիպի հատակագծով), մեզ մոտ չտեսնված հատակագիծ, սակայն, անշուշտ, հնագույն շրջանի, ինչպես ցույց են տալիս քանդակները (ոչ շատ), պրոֆիլները, պայտածե կամարները և այլն: Այս եկեղեցին վերին



Ալից՝ Լևոն Շանթ, Ստեփան Լիսիցյան, երրորդը՝ անհայտ, կանգնած՝ Լևոն Լիսիցյան:

աստիճանի հետաքրքիր մի պրոբլեմ է, որ շատ բան (թերևս անսպասելի) կարող է պարզել: Այս եկեղեցին ունի մի արձանագրություն գոտիաձև եկեղեցու շուրջ, երկաթագիր, պատի միջին բարձրության վրա, ոչ ուշ, քան VII դար, սակայն հագելվ թե հիմնադրության մասին: Դժբախտաբար միայն սկզբն է մնացել (այն էլ եղծված), մնացածը դիտմամբ տաշած, բավականին լավ է պահպանվել, [կան] նաև մի քանի այլ արձանագրություններ, մեկը՝ 1285 թվի, երկրորդը՝ Քորանի եկեղեցին, այժմ փայտածածկ, Քասախի և Ներքուկի տիպի՝ նույնությամբ, արձանագրություն չկա: Մույթերը փոխարինված են փայտե սյուներով, պայտածե աբսիդ, կապետելների հին ձևի պրոֆիլ, արևելյան խորանների դռների գլխին փորագրված ձուկ, օձ»<sup>28</sup>:

1916 թվական. պետրոգրադյան շրջան

... Բժավոր տիֆով հիվանդանալն անհնար է դարձնում ռազմաճակատում Լ. Լիսիցյանի մնալը: Նա վերադառնում է Թիֆլիս: 1915 թ. սեպտեմբերի 17-ին Լոգանից Լ. Շանթը Ստ. Լիսիցյանից հետաքրքրվում է. «Կը հուսամ Լևոնը կազդուրված է արդեն բոլորովին»<sup>29</sup>:

<sup>28</sup> Կիրիմյան. 1991, 151–152:

<sup>29</sup> Վարդանյան. 1992, № 1, 129, Շանթ. 2017, 249: Հոկտեմբերի 6-ին էլ Ստ. Լիսիցյանին Լ. Շանթը գրում է. «Կը հուսամ, առողջ եք բոլորդ, և որ Լևոնը արդեն ապաքինված է վերջնապես» (Շանթ. 2017, 251: Հմմտ. Վարդանյան. 1992, № 1, 130):

Ամենայն հավանականությամբ, 1916 թ. հունվարին Լ. Լիսիցյանը մեկնում է Պետրոգրադ<sup>30</sup> իր վաղեմի երազանքն իրագործելու համար, այն է՝ ուսանել մեծ հայագետ ու գիտնական Ն. Մառի մոտ: Մայիսի 29-ին Բաքվից Լ. Շանթը Ստ. Լիսիցյանին հայտնում է. «Սիրելի՛ Ստեփանս, շատ-շատ բարև ու համբույր քեզի Լեոնեդ ու Սրբուհիեդ. չաբաթ մը Պետրոկրատ էի, չաբաթ-վան մը չափ Մոսկվա: Լեոնի տրամադրությունը սկիզբը շատ լավ էր, պատմեց ինձի իր առաջիկա ամառվան ծրագիրը, մտադիր էր մնա իր տեղը ու աշխատի. ելավ զորակոչի նոր կարգադրությունը ուսանողների վերաբերմամբ, ու ամեն ինչ դարձավ տակնուվրա: Իսկույն դիմեց պրոֆ. Մարին և փորձեց մտնե անոր կազմակերպած Անիի արշավախմբին մեջ, որ քանի մը ամիս ժամանակ չահվի. կամ կը մտածեր քաղաքներու միություն կողմից երթա նոր գրավված հայկական վայրերը, դեռ պատասխան չունեի, որ ես մեկնեցա Պետրոկրատեն. վերջը գրեց Մոսկվա, որ Անիի պատմության համար արդեն ուշ էր, և որ ինքը վճռեց է մայիսի վերջը ճամփա ելնե Կովկաս գինվորական վարժարան մտնելու»<sup>31</sup>:

Պետրոգրադում գտնվելու ընթացքում Լ. Լիսիցյանը ջութակի դասեր է առնում հայտնի ջութակահար, դիրիժոր, Պետրոգրադի կոնսերվատորիայի ջութակի, կվարտետի և կամերային անսամբլի դասարանի ղեկավար, պրոֆեսոր Լեոպոլդ Աուերի մոտ<sup>32</sup>: Միաժամանակ քարտուղարություն է անում «պարոն Պապաջանյանի մոտ»<sup>33</sup>, աշխատավարձն ուղարկում է Թ. Թորամանյանին՝ «մինչև որ հաջողվի նրա համար մի տեղից թոշակ գտնել: Խնդճի դրությունը շատ դժվար է»<sup>34</sup>:

<sup>30</sup> 1916 թ. փետրվարի 15-ին Բաքվից Լ. Շանթը գրում է Ստ. Լիսիցյանին. «Ստեփան՝ ջան, քենիներեդ իմացա, որ Լեոնը մեկնեց է մայրաքաղաք, ուրեմն այդպե՛ս վճռեցիք. գինվորագրության հարցը անշուշտ ստուգած ես նախապես» (Շ ա ն թ . 2017, 259):

<sup>31</sup> Շ ա ն թ . 2017, 262: Հմմտ. Վ ա ռ դ ա ն յ ա ն . 1992, № 1, 137–138:

<sup>32</sup> Նկատենք, որ Լ. Աուերի ամենասիրելի աշակերտն ու օգնականն է եղել հանրահռչակ ջութակահար Հովհ. Նալբանդյանը (տե՛ս ՊԲՀ-ի սույն համարում Ա. Ասատրյանի հոդվածը՝ էջ 26–48):

<sup>33</sup> Սուքը Նովոռոսիյսկի համալսարանի իրավաբանական ֆակուլտետն ավարտած, Ռուսաստանի 4-րդ Պետական դոմայի (1912–1917), Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (1917) անդամ, Հայ ժողովրդական կուսակցության հիմնադիրներից (1917), Բաթումում և Կ. Պոլսում Հայաստանի Հանրապետության պատվիրակության (1918), Փարիզի խաղաղության վեհաժողովի Հայոց ազգային պատվիրակության (1919–1922) անդամ, ՀՕԿ-ի Ֆրանսիայի շրջանի կենտրոնական վարչության նախագահ (1926), հասարակական-քաղաքական հայտնի գործիչ Միքայել Պապաջանյանի (1868–1929) մասին է: Ցավոք, մեզանում հրատարակված հանրագիտարաններում «Հայկական սովետական հանրագիտարան»-ում (հ. 9, Երևան, 1983, էջ 130), «Հայկական համառոտ հանրագիտարան»-ում (հ. 4, Երևան, 2003, էջ 155), «Ով ով է. հայեր: Կենսագրական հանրագիտարան»-ում (հ. 2, Երևան, 2007, էջ 305), «Հանրագիտական բառարան»-ում (հ. 2, Երևան, 2018, էջ 604) այս գործչի մասին խոսք չկա: Հավելենք, սակայն, որ պատմաբան Գոհար Ավագյանը 2009 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Միքայել Պապաջանյանի հասարակական-քաղաքական գործունեությունը» վերնագրով:

<sup>34</sup> Հ ա կ ո բ յ ա ն . 1964, 100:

Ի դեպ, Լ. Լիսիցյանը Պետրոգրադում ծանոթանում է Հնչակյան կուսակցության հիմնադիրներ Մարո և Ավետիս Նազարբեկյանների դստեր՝ Հեղինեի (Ելենա) հետ, ով սովորում էր տեղի կոնսերվատորիայում, և Թիֆլիսում 1919 թ. նրանք ամուսնանում են<sup>35</sup>:

Լ. Լիսիցյանի գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետությունում շրջանում

1916 թ. հոկտեմբերի սկզբին Լ. Լիսիցյանն արդեն Թիֆլիսում էր, և շուտով զորակոչվում է տեղի սպայական հետևակային դպրոցում սովորելու: Իր փայլուն ընդունակությունների շնորհիվ ավարտելուց հետո նույն դպրոցի ուսուցիչ է նշանակվում: «Երբ Կովկասը անջատվում է Ռուսաստանից, Լ. Լիսիցյանին հայկական կառավարության կողմից առաջարկվում է հիմնել ենթասպայական դպրոց. այս պարտականությունը նրան թելադրեց հայերենի վերածելու զինվորական ծառայության և վարժությունների ուղեցույց դասագրքերը և հրամանատարական տերմինոլոգիան, այս միջոցին հրատարակում է «Հրահանգ զինվորական վարժությունների» գիրքը 1918 թ., – գրում է Ս. Տեր-Հակոբյանը: – Որպես Հայաստանի աշխարհագրության և պատմության գիտակ մի անձ արձակվելով զինվորական ծառայությունից, 1918-ին Հայաստանի կառավարության կողմից Պոլսի կոնֆերանսին ուղարկված պատգամավորության կցորդ նշանակվեց, որտեղ պատրաստել է պատգամավորության տված հուշագրին կցված Հայաստանի սահմանների մասին պատմական ակնարկը – *Aperçu Historique (տպված)*»<sup>36</sup>:

Հավելենք. 1918 թ. հունիսի 13-ին Հայաստանի նորաստեղծ Հանրապետության պատվիրակությունը Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ մեկնում է Կ. Պոլիս՝ մասնակցելու միջազգային խորհրդաժողովին: Պատվիրակության քարտուղարը և ղեկանազիտական ցրիչը Լ. Լիսիցյանն էր: Պատվիրակության նպատակն էր՝ «ցույց տալ մեր անվիճելի իրաւունքները Ախալքալաքի, Լոռիի, Զանգեզուրի, Ղարաբաղի եւ Նախիջևանի վրայ, որոնց վրայ յաւակնութիւններ ունէին մեր կովկասեան հարեւանները»<sup>37</sup>: Խորհրդաժողովը, սակայն, տեղի չի ունենում, և նոյեմբերի 1-ին պատվիրակությունը ձեռնունայն վերադառնում է Երևան: Պատվիրակության գործունեության մասին Լ. Լիսիցյանը թողել է խիստ ուշագրավ օրագրային գրառումներ<sup>38</sup>:

<sup>35</sup> 1920 թ. հունվարին նրանք ունենում են Նորայր անունով զավակ, ով 10 տարեկան հասակում անգլիայով հաճախակի հիվանդանալու հետևանքով ինֆարկտից մահացել է (Лисициан. 2002, 8):

<sup>36</sup> Տ է ր - Յ ա կ. 1922, 318:

<sup>37</sup> Ս ու ը թ ի ա ս յ ա ն. 2015, 194:

<sup>38</sup> Մանրամասն տե՛ս Ս ու ը թ ի ա ս յ ա ն. 2015, 193–203: Հավելենք. ճանաչված պատմաբան, տնտեսագետ-վիճակագիր Ա. Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) ուշագրավ հուշերից տեղեկանում ենք, որ 1918 թ. օգոստոսի 7-ին Դիլիջանում հանդիպել է մի անձնավորության, ում հետ տաճկական փոստատար ավտոմեքենայով ուղևորվել է Աղստաֆա, ապա՝ գնացքով մեկնել Թիֆլիս: Այդ ընթացքում պարզվել է, որ անձանոթ խոսակիցը Լ. Լիսիցյանն է, ով Կ. Պոլսից Հայաստան էր եկել կառավարությանը հանձնելու պատվիրակության ղեկուցագրերը և նորից

... Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից անմիջապես հետո Փարիզում նախատեսվում էր անցկացնել ինտերպոլիցիան վեհաժողով, և հզոր ու ոչ հզոր ժողովուրդներից պահանջվում էր ներկայացնել հաշվարկված փաստացի հուշագիր (մեմորանդում)՝ հզորների պարագայում ծառայությունների և մասնակցության չափերի, ոչ հզորներինը՝ ըստ կրած վնասների ու կորուստների: Զորավար Անդրանիկին հասցեագրած 1918 թ. դեկտեմբերի 14-ի թվակիր նամակում Հովհ. Թումանյանը մասնավորապես հայտնում է. «Մեր կառավարությունը մինչև էսօր էլ կոնգրեսին (Փարիզում կայանալիք ինտերպոլիցիան վեհաժողովին – Ա. Զ.) ներկայացնելիք մեմորանդումի համար հոգս չքաշեց, նյութեր չհավաքեց, թե ինչ կորուստներ ենք ունեցել մենք կամ ինչ բռնություններ են կատարվել մեր ժողովրդի վրա: Ստիպված մենք սկսեցինք՝ Հայրենակցական միությունների կենտրոնական խորհուրդը: Այժմ իմ նախագահությամբ մի բյուրո է կազմված (1918 թ. նոյեմբերի 21-ին՝ «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողով» – Ա. Զ.) և աշխատում է եռանդով»<sup>39</sup>: Քննիչ հանձնաժողովի աշխատանքները կազմակերպելու համար ստեղծվում է չորս ենթահանձնաժողով կամ բաժին՝ պատմա-քաղաքական, ռազմապատմական, տնտեսական և քրեական<sup>40</sup>: Ռազմապատմական բաժնի վարիչ է նշանակվում 1914 թ. աշնանից Կովկասյան ճակատում և Արևմտյան Հայաստանում լայն գործունեություն ծավալած զորավար, գեներալ-մայոր, բանաստեղծ Ալեքսանդր Կուլեբյակինը<sup>41</sup>:

1918 թ. դեկտեմբերի 19-ին պողպորուչիկ Լ. Լիսիցյանը դիմում է Քննիչ հանձնաժողովին. «Առաջարկում եմ իմ աշխատակցությունը Քննիչ հանձնաժողովի գլխավորապատմական բաժնի մեջ»<sup>42</sup>: Նա աշխատանքի է ընդունվում ռազմապատմական բաժնում՝ որպես քարտուղար:

Բաժնին իր գործունեության շրջանակում ծրագրել էր փաստական նյութերի հիման վրա ներկայացնել «Հայերի մասնակցությունը համաշխարհային պատերազմին» վերնագրով տեսություն, որի մեջ հատուկ տեղ պետք է զբաղեցներ «Կամավորական շրջանի՝ 1914–1916 թթ.» պատմությունը: Տքնաճան աշխատանքի շնորհիվ շուտով զանազան նյութեր են հավաքվում (գեղուցումներ, հրամաններ և այլն) Ազգային բյուրոյի, Հայոց ազգային խորհրդի, Զինվորական խորհրդի անդամներից, ինչպես նաև կամավորական ջոկատների հրամանատարներից: Անխտիր բոլոր հասցեատերերը հապշտապ արձագանքում են: Խոստեն է հետևյալ իրողությունը. Հովհ. Թումանյանը 1919 թ. փետրվարի 11-ին Բաքվում գտնվող Համազասպ Սրվանձտյանցին հասցեա-

վերադառնում էր Պոլիս (այդ մասին հետաքրքիր մանրամասները տե՛ս Ա. Դ. 2015, 424–429):

<sup>39</sup> Թումանյան. 1999, 299:

<sup>40</sup> Քննիչ հանձնաժողովի մասին մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ՝ Ա. Զաքարյան, Երևան, 2005:

<sup>41</sup> Ալ. Կուլեբյակինի մասին մանրամասն տե՛ս Закарян. 2003.

<sup>42</sup> Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 221, ց. 1, գ. 38, թ. 25: Թողոն: Ձեռագիր:

գրած նամակում խնդրում է՝ զորավարի մոտ եղած նյութերը հնարավորինս շուտ ուղարկել իրեն: Վերջինս ռազմապատմական բաժնին տրամադրել է ինչպես կամավորական 3-րդ ջոկատի, այնպես էլ Բաքվի 1918 թ. պաշտպանությունը վերաբերող նյութերը: Այդ մասին տեղեկանում ենք Լ. Լիսիցյանի՝ 1920 թ. հունիսի 16-ին Վրաստանում Հայաստանի Հանրապետության զինվորական ներկայացուցիչ, գեներալ-մայոր Հ. Քիչմիշյանին ուղղված զեկուցագրից, որտեղ հիշատակված թվով 13 նյութերի ցանկում 3-րդ ու 6-րդ համարների տակ նշված են «Համազասպի արխիվը» և «Գրառումներ Բաքվի պաշտպանությունում Համազասպի ջոկատի գործունեության մասին» խորագրերով փաստաթղթերը: Այդ զեկուցագրից նաև իմանում ենք, որ հավաքված որոշ նյութեր (350 մեքենագիր էջ) 1919 թ. ապրիլին Հայոց ազգային պատվիրակության անդամ Մ. Պապաջանյանի միջոցով ուղարկվել են Փարիզի հաշտության կոնֆերանսին<sup>43</sup>:

Ինչևէ, ռազմապատմական բաժնի քարտուղարի պաշտոնում Լ. Լիսիցյանը բոլորանվեր գործունեություն է ծավալում. դրա վկայությունը նաև այն է, որ հատուկ աշխատություն է պատրաստում՝ «Հայերի մասնակցությունը 1914–1918 թթ. համաշխարհային պատերազմին: Ռազմա-պատմական տեսություն: Նախնական ծանոթություն» վերնագրով<sup>44</sup>:

Հայտնի է, որ Առաջին Հանրապետության ստեղծումը բուռն ոգևորություն առաջ բերեց Հայության շրջանում. յուրաքանչյուր ոք աշխատում էր ներածին չափով օգնել հայրենիքի հոգևոր և տնտեսական վերածննդի գործին<sup>45</sup>: Վերջիններիս թվում էին նաև բաքվաբնակ մեծահարուստ ձեռնարկատերեր Մայիլյան եղբայրները՝ Եղիան, Դանիելը և Հովհաննեսը: Ժամանակին նրանք հայտնի էին իրենց ծավալած ազգօգուտ բարեգործությամբ: 1919 թ. սկզբներին իրենց նյութական միջոցներով եղբայրները ստեղծում են մի կազմակերպություն, որն անվանվում է «Մայիլյան եղբայրների գիտական-տնտեսական արշավախումբ»:

Լ. Լիսիցյանն ակտիվորեն մասնակցում է կազմակերպության աշխատանքներին: Արշավախմբի պատվերով հոր՝ Ստ. Լիսիցյանի հետ մտադրվել էին ընդարձակ հետազոտություն պատրաստել՝ «Աշխարհագրության ազդեցությունը Հայաստանի պատմության, մշակույթի և երկրի ազգաբնակչության հոգեբանության վրա» թեմայով: Ուսումնասիրության ընթացքի մասին 1919 թ. օգոստոսի 27-ին Սարիղամիշից հորը գրած նամակում Լևոնը նախ հետաքրքրվում է՝ «< ... > Հայրիկ ջան, արդյոք, ինչպե՞ս է գնում աշխատությունը», ապա՝ հայտնում. «... ես, առայժմ, իհարկե, ոչինչ գրեթե չեմ արել, բացի խորենացու ընթերցանությունից, որը ինձ վրա խոր տպավորություն է թողնում, առաջին անգամն է, որ կարդում եմ և որ առաջագույնն է մեր պատմագիրներից և հայրենասերներից, գրաբարը մի քիչ մոռացել եմ, բայց արագ կեր-

<sup>43</sup> Ս տ ե փ ա ն յ ա ն. 2016, 23–25: Ռազմապատմական բաժնում հավաքված նյութերի հետագա ճակատագրի մասին տե՛ս Ս տ ե փ ա ն յ ա ն. 2016, 29–34:

<sup>44</sup> Տե՛ս Закарян. 2003, 233–236.

<sup>45</sup> Մանրամասն տե՛ս Микаелян, Мирзоян. 1990, 74–81.

պով վերականգնում եմ»<sup>46</sup>: Սեպտեմբերի 14-ին էլ դարձյալ Սարիղամիշից հետաքրքրվում է. «Հայրիկ ջան, աշխատանքդ արդյոք ի՞նչ դրուժյան մեջ է: Ի՞նչ է անում «Մայիլյան արշավանքը». արդյոք կառավարչական է դառել, թե՞ ոչ»<sup>47</sup>:

Լ. Լիսիցյանն արշավախմբի ստեղծման, նրա առջև դրված խնդիրների ու նպատակների, կատարված աշխատանքի մասին գրել է ամփոփ տեղեկատվությամբ՝ «Տեսություն գործունեության «Մայիլյան եղբայրների գիտական-տնտեսական արշավանքի ի Հայաստան» առ 1-ն հունվարի 1920 թվի» վերնագրով<sup>48</sup>:

... 1919 թ. կեսերին տեղեկանալով Սարիղամիշին սպառնացող վտանգի մասին Լ. Լիսիցյանը «ինքնաբերաբար հայտնում է Երևանի կառավարություն իր ծառայելու պատրաստակամությունը»<sup>49</sup> և ՀՀ գինվորական նախարարի հրամանով ծառայության է անցնում Սարիղամիշում գտնվող հայկական «ամենալավ»՝ 4-րդ գնդում՝ որպես 3-րդ կամավորական վաշտի վաշտապետ. իր ենթակայության տակ ունեցել է 110 գինվոր ու մի սպա:

Ծնողներին գրած նամակներում Լ. Լիսիցյանը տեղեկացնում է իր գինվորական գործի, ծառայողական պարտականությունների ու հոգսերի, չքնաղ բնության, Ղարաի «հոյակապ բերդի», ժողովրդի հետ իր շփումների, երեկոները և գիշերները ընթերցանությամբ զբաղվելու մասին («... ես ճարել եմ ... բավականաչափ պատմական և կովկասագիտական գրքեր»), հետաքրքրվում է հոր գիտական աշխատանքներով և այլն: Այսպես. «... Ի միջի այլոց, իմ «Ներհակ զորակազմի կանոնագրի» թարգմանությունս գործ է ածվում ամեն տեղ մեր զորքերում, ուր մտցված է հայերեն կոմանդոն»<sup>50</sup>:

1919 թ. սեպտեմբերի 14-ին Սարիղամիշից «Անգին հայրիկ և մայրիկ»-ին ուղղված նամակում Լ. Լիսիցյանը հայտնում է. «Բաշ-քեյում (Բաշ-գեղ) վերցրի մի հին, 260 տարվա հայ տան հատակագիծ և գրեցի նկատողություններս և նկարագրությունը: Երբ առիթ հանդիսանա, նույնը կանեմ քրդական, հունական և տաճկական տան համար: ... < ... > Հայրիկ, ես կմշակեմ և կուղարկեմ քեզ հայկական տան մասին իմ գրածս և հատակագծերը, ափսոս, որ ձեռքիս տակ չունեմ Մեսրոպ եպ[իսկոպոս]ի «Հայկ[ական] գյուղացու տունը» և «Ազգագրական հանդեսի» նյութերը: Կարծես նաև այլ նյութեր հետաքրքիր կլինի համեմատել[ու] հայկ[ական] տունը քրդականի, տաճկա-թուրքականի և հունականի հետ: Խոշոր և նշանակալից տարբերություններ կան: Հայկականը ամենից մեծն է, կատարելագործվածը, հաստատունը»<sup>51</sup>:

Նույն նամակում Լ. Լիսիցյանը, խոսելով իր ապագա ծրագրերի մասին, գրում է. «< ... > Չգիտեմ ինչպես է դասավորվելու վերջի վերջո մեր քաղաքական դրությունը: Համենայն դեպս ամեն գնով պիտի աշխատեմ, որ-

<sup>46</sup> Կիրիմյան. 1991, 152:

<sup>47</sup> Կիրիմյան. 1991, 154:

<sup>48</sup> Մայիլյան եղբայրների գիտատնտեսական արշավախմբի մասին մանրամասն տե՛ս Զաքարյան. 2001, 277–285, Г а з и я н. 2008, 244–251.

<sup>49</sup> Տէր-Յակ. 1922, 318:

<sup>50</sup> Կիրիմյան. 1991, 152:

<sup>51</sup> Կիրիմյան. 1991, 154–155:



պեսզի եկող ամառվանից կամ աշնանից անցնեմ արտասահման, այնտեղ մնալու համար մի երկու տարի, ավարտելու և կատարելագործելու իմ ուսումնական պակասներս ու ինքնուրույն մի գործ գլուխ բերելու: Իհարկե, խնդիրը ամենից առաջ նյութականի մեջն է, գուցե մեր կառավարությունը մյուսների նման, կամ մեր համալսարանը կամանդիրովկաներ տա կամ գուցե հաջողվի որևէ մի դիվանագիտական միսիա ստանձնել. մասնավոր որևէ աղբյուրներ հազիվ թե ճարվեն: Այդ մասին ես լուրջ մտածում եմ: ... Կաշխատեմ, որ որքան կարելի է կարճ լինի իմ զինվորությունս: Իմ մնայուն և վերջնական նպատակն է գիտնական աշխատանքը, և ինչ էլ որ լինի իմ պարամունքս, փորձառությունս կամ կյանքի հասունությունը, ես նայում եմ նրան այդ գլխավոր նպատակի տեսակետից (ընդգծումը մերն է – Ա. Զ.)»<sup>52</sup>:

Սարիղամիշին սպառնացող անմիջական վտանգի վերացումից հետո Լ. Լիսիցյանին արձակուրդ է տրվում. նա վերադառնում է Թիֆլիս<sup>53</sup>:

1920 թ. ամռանը Լ. Լիսիցյանը կրկին կանչվում է Երևան գլխավոր շտաբին կից ծառայության: «Մի երկու ամիս անց սկսվում է տաճիկների հարձակումը, Կարսի անկումը, ... կառավարության տեղատվությունը ... »<sup>54</sup>: Երևանում Լ. Լիսիցյանը խոր հիասթափություն է ապրում, որի վկայությունը նույնիսկ 2-ի պատմաճանաչողական որոշակի արժեք ունեցող նամակի հետևյալ տողերն են. «Իմ անգին հայրիկ // Ապրում ենք մղձավանջի օրեր: Կարսը ընկավ ամենաանփառունակ կերպով մեկ օրվա թույլ դիմադրությունից հետո: Բերդապահ գործը չնկատեց, ինչպես թշնամին մտավ քաղաքի փողոցները: Այժմ կռիվները փոխվել են Արեքսանդրապոլի շրջանը և շատ հավանական է, որ մեր կապը իրար հետ կտրված կլինի շուտով: Կառավարությունը և տիրող կուսակցությունը մեռցրել են ժողովրդի մեջ հերոսության ոգին և ամբոխների ինքնապաշտպանության ու տիրության կույր բնագոյը, և նրանք չեն, որ պետք է կարողանան նորից զարթոնանք: Կառավարության անդամների ու ղեկավար գործիչների բոլոր զեկույցներն ու խորհրդակցությունները արվում են դռնփակ, «ֆրակցիաների» ժողովներում, իսկ ժողովուրդն ու հասարակությունը ապրում են ստահող կամ չարանենգ փափսուկներով ու անտարբեր անցնում է պաշտոնական «կոչերի» ու «հաղորդագրությունների» մոտով: Ձգիտեմ, պիտի զարթնի՞ արդյոք և ե՞րբ ժողովրդի առողջ ու կատաղի բնագոյը: Մինչև այժմ մեր բանակը, որը շատ մեծ է իր բազմությունը, փախուստի է դիմում ոչխարի հոտի նման: Ամենազարհուրելին այն է, որ երբ թշնամին քթի տակ է արդեն, մայրաքաղաքի կյանքն ունի իր նույն առօրյա տաղտկությունը և թմրությունը, որին խառնվել է միայն վախի զգացումը, բայց դարձյալ բավականին անտարբեր: Դատապարտված թմրություն, գառամած կենդանու հոգեբանություն, թե՛ կառավարության և թե՛ ժողովրդի մեջ: Իսկ մինչ այս եղել է զարմանալի անփութություն և թեթևամիտ խաղի վերաբերմունք ամեն ասպարեզում: Մենակ Իզդիրի (Դրոյի) ճակատում առայժմ կայուն է ու հաստատ: Ռուլանի փողն է հարկավոր, Գամբետայի ավյունն ու վարակիչ հավատը [խոսքը «Երգ Ռուլանդի մասին» ասքի և Ֆրանսիացի քաղաքական ու պետական նշանավոր գործիչ Լեոն Գամբետայի (1838–1882) մասին է – Ա. Զ.]: Չկա՛: Ամենքս սպասում ենք օրեցօր, որ զարթնի, արտա-

<sup>52</sup> Կիրիմյան. 1991, 154–155:

<sup>53</sup> Տէր-Յակ. 1922, 318:

<sup>54</sup> Տէր-Յակ. 1922, 318:

Հայտվի ժողովրդի ոգու արիությունն ու կատաղի բնազդը»<sup>55</sup>։ Այնուհետև շարունակում է. «Մեր ոճրագործ, կարճամիտ, ժողովրդակործան, ունայն ու թայֆայական «կառավարություն» քաղաքականության ամբողջ սնանկությունն ու դատարկությունը երևաց այժմ՝ այս մեծ փորձության ժամին։ Յուզբաշու նման ժողովրդին հրամայել, բայց ոչ՝ կազմակերպել, հավասարապես կրթել ... Ամոթ և խայտառակություն»<sup>56</sup>։ Բայցև «Համենայն դեպս, այնքան արագ է իրերի ընթացքը, որ դժվար է ասել, ինչ կլինի վաղը։ ... Դե, հույսներս չկորցնենք, լինենք դիմացկուն և հավատացող մինչև ամենավերջին վայրկյանը, ո՞վ գիտե, ինչպես և որտեղից կգա փրկությունը, մեկ ու կես միլիոն ժողովուրդ՝ սա մի ուժ է, որ պիտի էլեկտրականանա միայն թշնամուն կործանելու համար»<sup>57</sup>։

Հենց այդ օրերին էլ Լ. Լիսիցյանը խորապես համոզվում է, որ Հայ ժողովրդի փրկության միակ ուղին ռուսական կողմնորոշումն է, Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը։

Էջմիածնի կուլտուր-պատմական հաստատությունների վերակազմակերպիչը

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո չլինելով կոմունիստական կուսակցության անդամ՝ Լ. Լիսիցյանը դառնում է նորաստեղծ իշխանության ջերմ պաշտպաններից մեկը։ «Խորհրդային Իշխանությունը Լիսիցյանին ազատում է գինվորական ծառայությունից և նշանակում է Էջմիածնի կուլտուրական հիմնարկությունների (Թանգարան, Մատենադարան, Տպարան) կոմիսար»<sup>58</sup> . այստեղ նա ցույց է տալիս պաշտամունքի հավասար սեր և հոգածություն բոլոր այն պատմական-կուլտուրական արժեքներին, որոնք ժամանակի ընթացքում հավաքված էին այդ հնավայրում։ Իսկ երբ հիմնվում է Կուլտուր Պատմական Ինստիտուտը (1921 թ. փետրվարի 5-ին — Ա. Զ.), որ Լիսիցյանի վաղեմի փափազն էր եղել, նշանակվում է Ինստիտուտի կոլեգիայի

<sup>55</sup> Կ ի Ր ի մ յ ա ն. 1991, 156:

<sup>56</sup> Կ ի Ր ի մ յ ա ն. 1991, 157–158:

<sup>57</sup> Կ ի Ր ի մ յ ա ն. 1991, 158:

<sup>58</sup> 1920 թ. դեկտեմբերի 20-ին ՀՍԽՀ լուսժողկոմատի կողմից Լ. Լիսիցյանին տրված մանդատում ասվում է. «Տրվում է ընկ. Լեոն Լիսիցյանին առ այն, որ նա նշանակվում է Էջմիածնի նախկին վանական բոլոր կուլտուր-կրթական հիմնարկությունների կոմիսար։

Ընկ. Կոմիսարը լիազորված է ստանալ նախկին տէրերից այդ հիմնարկություններն ու նրանց պատկանող շարժական եւ անշարժ գույքերը՝ համաձայն ՀՍԽՀ Յեղկոմի 17 դեկտ[եմբերի] 1920 թ. դեկրետի և լուսժողկոմի նո. 1 եւ 3 հրամանների։ Ընկ. Կոմիսարին վերապահված է իրաւունք տեղական Յեղկոմի միջոցով բռնագրավել պետականացնող հիմնարկությունների համար մասնաւոր անձանց մօտ գտնւած այն բոլոր հնութիւններն ու գեղարւեստական գործերը, որոնք ունեն համապետական նշանակութիւն։

Ընկ. Կոմիսարին իրաւունք է տրւում կազմակերպել իր հսկողութեան տակ գտնւած հիմնարկութիւններում ընթացիկ աշխատանքները։

Խնդրում եմ բոլոր խորհրդային և կոմունիստական հիմնարկութիւններին և կազմակերպութիւններին լայն աջակցութիւն ցոյց տալ ընկ. Կոմիսարին նրա վրայ դրած պարտականութիւնները կատարելու ժամանակ» (Ս ու ք ի ա ս յ ա ն. 2013, 77–78)։

անդամ և թանգարանի վարիչ»<sup>59</sup>: Այդ ինստիտուտի բազայի վրա էլ, ի դեպ, 1921 թ. մայիսի 26-ին կազմակերպվում է Էջմիածնի գիտական ինստիտուտը<sup>60</sup>:

Սկզբնական շրջանում Լ. Լիսիցյանը չի ունեցել ոչ գրասենյակ, ոչ էլ հաստիքային աշխատողներ. բոլոր փաստաթղթերը նրա ձեռքով գրված զեկույցների, հաշվետվությունների, նամակների պատճեններ են: Դրանք վկայում են, թե նա ինչ ջանքեր է թափել՝ ի մի բերելու, հավաքելու համագլխային նշանակություն ունեցող հոգևոր գանձերը: Հատուկ շեշտենք, որ այդ պաշտոնում Լ. Լիսիցյանի նշանակումը հիմնականում պայմանավորված էր նրա գիտական ու գինավորական հարուստ գիտելիքներով ու փորձառությունով, նման աշխատանքի համար շատ կարևոր անձնական որակներով. անսահման հայրենասիրություն, Հայաստանի մշակույթի նկատմամբ նվիրվածություն, հանձնարարված գործի համար պատասխանատվության մեծ զգացում, աշխատանքը կազմակերպելու և իրականացնելու կարողություն, մարդկանց նկատմամբ զգայուն վերաբերմունք:

Արխիվային վավերագրերը լույս են սփռում Լ. Լիսիցյանի լարված աշխատանքի վրա. դեկտեմբերի 21-ին գալով Էջմիածին՝ «... Մայր Աթոռի վանական խորհրդից, Սինդիկատից, Դիվանից, շուրջ երկու տասնյակ հոգևորականներից պահանջեց իրեն հանձնել Հայաստանի հեղկոմի դեկրետի և Լուսավորության ժողովմատի հրամանների հիման վրա պետականացվող հիմնարկներն ու նրանց պատկանող գույքը»<sup>61</sup>:

«Լ. Լիսիցյանի կարգադրությամբ՝ մատենադարանի կարիքների համար Մայր Աթոռից և նրա միաբաններից առգրավվեց մեծաքանակ գույք (Սինդիկատի մեծ և միջակ սեղաններ, գրքերի պահարան, թանաքամաններ, կարկին, գրասեղան, դահլիճի սեղանը, երկու մեծ գորգեր, մեծ համրիչ, երեք երկաթե վառարան, տախտակներ՝ մատենադարանի դարակները պատրաստելու համար, լվացարաններ, դուլլեր, ինքնաեռներ, լուսանկարչական ապարատ, ապակիներ, թուղթ և այլն)»<sup>62</sup>:

Դեկտեմբերի 23-ին լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանին ուղղված զեկույցագրում մանրամասն տեղեկացնելով վանքապատկան գույքի, ունեցվածքի պետականացման ուղղությամբ կատարված առաջին քայլերի մասին՝ Լ. Լիսիցյանը գրում էր, որ «կարևոր է համարում պետականացված մատենադարանն ու թանգարանը «մշտական ու կարող աշխատակիցների կազմով» ապահովելը: Նա առաջարկում է նաև Էջմիածին ուղարկել ճարտարապետ Թորոս Թորամանյանին՝ շրջանի ճարտարապետական հուշարձանների պահպանության պատասխանատու աշխատանքը ղեկավարելու համար»<sup>63</sup>:

<sup>59</sup> Տ է ր - Յ ա կ. 1922, 318–319:

<sup>60</sup> Ինստիտուտի հիմնադրման և գործունեության պատմությունը հանգամանորեն տե՛ս Տ է ր - Մ ի ն ա ս ե ա ն. 1922, 320–327, նաև կանոնադրությունը՝ 327–329:

<sup>61</sup> Ս ու լ ք ի ա ս յ ա ն. 2014, 97:

<sup>62</sup> Ս ու լ ք ի ա ս յ ա ն. 2014, 97–98:

<sup>63</sup> Ս ու լ ք ի ա ս յ ա ն. 2014, 97: Զեկույցագիրը տե՛ս Ս ու լ ք ի ա ս ե ա ն. 2013, 80–82: Լ. Լիսիցյանը Թ. Թորամանյանի առնչությամբ մասնավորապես գրում է. «Խնդրում եմ նաև Ձեր կարգադրությունը առաջարկելու ճարտարապետ Թ. Թորամանյանին (այժմ Երևանումն է) անցնել Էջմիածին և ստանձնել այստեղի և շրջանի ճարտարապետական յիշատակարանների վերահսկողությունը: Այդ նպատակայարմար է նաև այն պատճառով, որ նա զբաղված է այժմ Զուարթնոցի մոնոգրաֆիկ

ՀՍԽՀ լուստոդկոմ Աշ. Հովհաննիսյանը 1920 թ. դեկտեմբերի 28-ին նամակով Լ. Լիսիցյանին տեղեկացնում է Կուլտուր-պատմական ինստիտուտի գործերն իր հաջորդին՝ գրական-հասարակական գործիչ, մանկավարժ, սոցիալ-դեմոկրատ Լևոն Սարգսյանին, փոխանցելու և Երևանի պետհամալսարանում դասախոսական աշխատանքի անցնելու մասին: Նամակում, մասնավորապես, ասվում է. «Ես ենթադրում եմ, որ Էջմիածնում Ձեր գործունեությունը ժամանակավոր բնույթ է կրելու: ... Ձեր աշխատակցությունը կարևոր եմ համարում ուրիշ ասպարեզներում՝ ավելի գիտական, մասնագիտական հարցերում: Դուք արդեն իսկ մտնում եք Երևանի ժող. համալսարանի դասախոսների ցուցակի մեջ, այդտեղ դուք պիտի դասախոսեք սոցիալ-տնտեսական աշխարհայացք (աշխարհագրություն– Ա. Զ.) և ուրիշ Ձեզ հետաքրքրող հարցերից: Ենթադրում եմ, որ դուք պետք է մտնեք նաև վերակազմվելիք հնություն պահպանության կոմիտեի մեջ և այլն: Սիրում եմ հավատալ, թե իմ այդ ենթադրությունները համապատասխանում են Ձեր հակումներին, և դուք չպետք է զլանաք պահանջված վայրկյանին անմիջապես աշակցություն ցույց տալ (ինձ– Ա. Զ.) ժողովրդական լուս. գործերում»<sup>64</sup>:

Նշենք. որպես Էջմիածնի Կուլտուր-պատմական ինստիտուտի կոմիսար Լ. Լիսիցյանը պաշտոնը հանձնելիս մանրամասն հաշվետվություն է ներկայացնում 1920 թ. դեկտեմբերի 20-ից 1921 թ. փետրվարի 1-ը ընկած ժամանակահատվածում կատարած աշխատանքի մասին, հանգամանորեն անդրադառնում իր իրավասության տակ գտնվող մատենադարանին, թանգարանին, տպարանին, ճեմարանին՝ հարակից բոլոր շինություններով, Զվարթնոցի ավերակներին՝ հարակից շինություններով, «Օբսերվատորիա» կոչված կիսավարտ շենքին և էլեկտրակայանին՝ ներկայացնելով յուրաքանչյուրի վիճակը<sup>65</sup>:

#### Լ. Լիսիցյանի ողբերգական մահը

Եվ, սակայն, Լ. Լիսիցյանին վիճակված չէր շարունակել իր բազմաբեղուն գործունեությունը. ընդամենը 29 տարեկան հասակում ողբերգորեն զոհվում է 1921 թ. փետրվարյան հակաբոլշևիկյան ապստամբության օրերին՝ Էջմիածնում: «Փետրվարյան հեղաշրջման միջոցին Ինստիտուտի հիմնարկությունները պաշտպանելու համար գինված (Լ. Լիսիցյանը– Ա. Զ.) դուրս է գալիս և նույն օրը բանտարկվում է. իսկ հաջորդ օրը, փետրվարի 18-ի գիշերը մի հարբած խումբ, հավանորեն մոլթ թելադրանքներից մղված, հարձակվում է բանտի վրա և մի ուրիշ բանտարկվածի հետ միասին բռնություն դուրս են բերում բանտից և վերջ դնում նրա երիտասարդ կյանքին»<sup>66</sup> – գրում է Ս. Տեր-Հակոբյանը:

Լ. Լիսիցյանի հետ կատարվածի մասին Հովհ. Թումանյանը 1921 թ. ապրիլի 8-ին Երևանից Թիֆլիս՝ զավակներին գրած նամակում հայտնում է. «Ձգիտեմ, արդյոք տեղեկություն է հասել Թիֆլիս խեղճ Լևոնի – Լիսիցյանի սպանության մասին, թե չէ: Ձեք կարող երևակայել, թե ինչպես շանթահա-

ուսումնասիրություններ (Թ. Թումանյանի «Զվարթնոց» աշխատությունը լույս է տեսել 1978 թ. – Ա. Զ.)»։ Ս ու Լ ք ի ա ս ե ա ն. 2013, 81–82:

<sup>64</sup> Է վ ո յ ա ն. 1973, 191: Հմմտ. Ս ու Լ ք ի ա ս ե ա ն. 2013, 85:

<sup>65</sup> Է վ ո յ ա ն. 1973, 191–194: Հմմտ. Ս ու Լ ք ի ա ս ե ա ն. 2013, 89–94:

<sup>66</sup> Տ է ր -Յ ա կ. 1922, 319:

րեց ինձ նրա սպանության պատմությունը: Փետրվարի 18-ին, հեղաշրջումի օրը, հրացան է առել, դուրս եկել փողոց (Էջմիածնում): Հրացան է արձակել մի սասունցու թևը վիրավորել ու փախել մտել Հովհ. Հովհաննիսյանի (խոսքը Էջմիածնի գիմնազիայի վերատեսուչ, Հայաստանի խորհրդայնացումից հետո Վաղարշապատի գավառի լուսավորության բաժնի վարիչ, անվանի բանաստեղծ և մանկավարժ Հովհ. Հովհաննիսյանի մասին է – Ա. Զ.) տունը: Եկել են էնտեղից տարել բանտարկել, իսկ մյուս օրը բանտից հանել ու տարել նոր վեհարանի առաջ սպանել:

Խնդճ Ստեփան, խնդճ տիկին Կատարինե: Ել նրանք ինչպես են ապրելու: Խնդճ Լևոն, էնքան ջահել, էնքան պատրաստված ... (ընդգծումը մերն է – Ա. Զ.)»<sup>67</sup>:

Առնելով Լ. Լիսիցյանի ողբերգական մահվան բոլոր՝ 1921 թ. սեպտեմբերի 14-ին Ավետիք Իսահակյանն էլ Ազոլոյից Վարդգես Ահարոնյանին գրել է. «Լսեցի, որ Լիսիցյանի տղան (Լևոնը – Ա. Զ.) սպանված է Երևանում (Էջմիածնում – Ա. Զ.), շատ ցավեցի, սիրուն տղա էր և պատրաստված (ընդգծումը մերն է – Ա. Զ.). ախո՛ս, որ երիտասարդ ու թերը զոհ են գնում անգույժ հանգամանքներին. հեղափոխական Մոլոխը շատ զուր գոհեր է տանում. Աստված իմ, ե՛րբ պիտի վերջանա այս արյան բաղանիքը»<sup>68</sup>:

Էջմիածնի գիտական ինստիտուտի «Բանբեր»-ում «Հայ գիտության կուրուստներից (1914–1921)» բաժնում, Ս. Տեր-Հակոբյանը «Լևոն Լիսիցյան» վերնագրով հիշատակի խոսքում գրել է. «Եղեռներեն կյանքից խլված ազնիվ երիտասարդի բոլոր իղձերն ու աշխատանքները անկատար մնացին, որի մահը անմոռաց վիշտ դարձավ բոլորի համար՝ որոնց չըջանում երբևիցե եղել է Լևոն Լիսիցյանը, որ իր վերին աստիճանի կիրթ, բարեհամբույր, շիտակ բնավորությամբ միշտ սեր և հարգանք է գրավել, իսկ իբրև հասարակական աշխատավոր նա միշտ ցույց է տվել կատարյալ ուղղամտություն, լայն կարողություններ և աշխատասիրություն: Նա դեռ նոր էր իջել աշխատանքի ասպարեզը, բայց արդեն սկսել էր ցույց տալ ապագա փայլուն և արդյունալի մի գործունեության լավագույն նախանշանները: Լիսիցյանի կոչումը գիտության ասպարեզում գործելն էր, որի այս բուռն հակումը չլռեցրին պատերազմական տարիների և զինվորական տարիքի արգելքները: ... Հավերժ հիշատակ ազնիվ նահատակի անշունին»<sup>69</sup>:

Լ. Լիսիցյանի անժամանակ ու ողբերգական մահը խորապես ցնցել է նաև նրա հետ դեռևս պատերազմի տարիներից մտերիմ, այնուհետև «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» ռազմապատմական բաժնում և Մայիլյան եղբայրների գիտատնտեսական արշավախմբի կազմում համատեղ գործունեություն ծավալած, հայ ժողովրդին բոլորանվեր ծառայած ռուս գեներալ-բանաստեղծ Ալեքսանդր Կուլեբյակինին: Իր երիտասարդ ընկերոջ ու բարեկամի մահվան տարեկիցին նա գրում է ստորև բերվող զգայացունց բանաստեղծությունը և ընծալագրով նվիրում Լ. Լիսիցյանի կնոջը.

<sup>67</sup> Թ ու մ ա ն յ ա ն. 1999, 380–381:

<sup>68</sup> Ի ս ա հ ա կ յ ա ն. 2020, 372:

<sup>69</sup> Տ է ր -Յ ա կ. 1922, 319:

ПАМЯТИ ЛЕВОНА ЛИСИЦИАНА  
(19/II 1921 г.)

В годину бед, когда вся жизнь – ничто,  
Одна есть ценность – дух неистребимый.  
Жив человек, – толпа проходит мимо,  
Один, быть может, спросит:– это кто?–

Работник сильный скромн у станка,  
Но за него горда его работа.  
Знаток посмотрит, скажет:– сделал кто-то,  
Но видимо способная рука.–

А он попал под зубья колеса  
И превращен в кровавый слепок мяса:  
Он не предвидел гибельного часа,  
Когда взмахнет жестокая коса.

Но нет! ты жив: твой подвиг налицо.  
Ты жив, герой! я в смерть твою не верю.  
Ты заплатил собою Року–зверю,  
Но от тебя осталось деревцо.

Ты из зерна на вспаханном пути  
Вспоил росток его грядущей жизни.  
Его плоды оценятся в отчизне,  
И ты ее за кровь твою ... прости!!...

Елене Аветовне Лисициан в знак памяти и глубокого почитания дорогого имени погибшего моего молодого друга: да будет живо оно. А. Кулебякин. 23/II 1922 Тифлис<sup>70</sup>.

*Վերոգրյալներին հավելենք. տարիներ անց ողու նշանավոր գրող-հրապարակախոս, կինոգրամատուրգ Կիմ Բակչին անդրադարձել է Լ. Լիսիցյանի մահվան հանգամանքներին: Օգտագործելով Էջմիածնի շրջանային Ձեկայի պարետի հիշողությունները (վերջինս դրանք գրել է Նազելի Լիսիցյանի խնդրանքով՝ դեպքերից, հավանաբար, 50 տարի անց)՝ ներկայացրել է Լ. Լիսիցյանի կյանքը վերջին ամիսներին: Հուշերի հեղինակը եղել է Լևոնի կողքին նաև բանտում՝ միևնույն խցում: Ըստ հուշագրի, որպես խորհրդային իշխանության ներկայացուցչի՝ շատերի թվում իր հետ Լևոնին էլ են ձերբակալել, բանտ նետել, պատժախուց նստեցրել: Օրեր անց՝ առավոտյան,*

<sup>70</sup> Ղ ա Ր Ի Բ Ջ ա ն յ ա ն, Վ ա Ր դ ա ն յ ա ն. 1993, 58, Յ ա կ ա ղ յ ա ն. 2003, 198. Ի դեպ, Հայաստանի ազգային արխիվում ժամանակին հայտնաբերել ենք այս բանաստեղծության երկրորդ օրինակը՝ ընծայագրով Լ. Լիսիցյանի ծնողներին. «Отцу и матери на память о любви моей к их безвременно павшему дорогому сыну» (Յ ա կ ա ղ յ ա ն. 2003, 198).

բանտի բակում քաղաքային ամբոխը հարձակվել է նրա վրա, գետնին տապալել, ապա դաշունահարելով-դանակահարելով սպանել<sup>71</sup>:

... Իբրև վերը շարադրված նյութի ամփոփում՝ մեջբերենք Լ. Լիսիցյանի քրոջ՝ Նազելիի բնութագրական խոսքը եղբոր մասին. «Լևոնը տաքարյուն և բռնկուն էր, բայց արագ նահանջում էր: Իր մարդամոտություն և սրամտությունը չնորհիվ չընկալատում վայելում էր սեր ու հարգանք: Նա բարեկամ էր, միջին հասակից բարձր, ուներ շագանակագույն աչքեր, կանոնավոր դիմագծեր, կանանց նա շատ էր դուր գալիս: Լևոնը հիանալի ջութակ էր նվագում, չէ որ ավարտել էր Թիֆլիսի կոնսերվատորիան: Մի ժամանակ բոլորը կարծում էին, որ նա ջութակահար կդառնա, և թեպետ հետագայում գիտական ուսումնասիրությունների նկատմամբ ձգտումը նրա մեջ գերիշխեց երաժշտության հանդեպ նկրտումից, նա միշտ շարունակում էր ջութակ նվագել»<sup>72</sup>:

### Եզրակացություն

Լ. Լիսիցյանի կարճատև, բայց բովանդակալից, իրադարձություններով լեցուն կյանքն ու գործունեությունը կարելի է բաժանել հետևյալ շրջափուլերի. ա) ուսանողական տարիներ (Մյունխենի, Մոսկվայի, Վիեննայի համալսարաններ), որի ժամանակ սկզբնավորվել է նրա գիտական գործունեությունը. նա եղել է ավստրիացի նշանավոր պատմաբան ու ճարտարապետ, պրոֆ. Յոզեֆ Ստրիգոլսկու հայկական մշակույթի հարցերով խորհրդատու, բ) ներդրումը 1913 թ. սեպտեմբերի 14-ից հոկտեմբերի 4-ը Յո. Ստրիգոլսկու գլխավորությամբ Հայաստան այցելած գիտական արշավախմբի աշխատանքներին, գ) 1914–1915 թթ. մասնակցությունը հայկական կամավորական խմբերի գործողություններին և ազգօգուտ գործունեությունը Հայ գաղթականների եղբայրական օգնության կոմիտեի Բայազետի լիազոր-ներկայացուցչի պաշտոնում, դ) 1916 թվական. պետրոգրադյան շրջան, ե) գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության շրջանում. 1918 թ. հունիսի 13-ից նոյեմբերի 1-ը Կ. Պոլսում Հայաստանի Հանրապետության պատ-

<sup>71</sup> Լ. Լիսիցյանի կյանքի վերջին շրջանի՝ հոգևորականների նյութած դավերի, քաղաքի բնակիչների շրջանում նրա գործունեության և Մոսկվայի գործակալ լինելու մասին տարածված ստահող լուրերի, բանտում դաշնակցության կենտրոնի լիազոր-ներկայացուցչի՝ Հայրենիքի փրկության կոմիտեի նախագահ Սիմոն Վրացյանի անունից կատարած առաջարկի մերժման և հետաքրքիր այլ մանրամասների մասին տե՛ս Բ а к ш и. 2002; Г а р и б д ж а н я н. 1972. Ա-Դո-ն գրում է. «Հայաստանի խորհրդայնացումից հետո նա (Լ. Լիսիցյանը–Ա. Զ.) հաստատվեց Էջմիածնում և գործունեության ասպարեզ ընտրեց Էջմիածնի հարուստ մատենադարանը, որտեղ վանքի մի երկու կրոնամոլ սևագլուխների դրդմամբ իբրև Էջմիածնի սրբությունները պղծողի 1921 թ. փետրվարի 18-ին զոհ գնաց խելառ սվինների» (Ա-Դո. 2015, 427):

Հավելենք. Կ. Բակչին իր «Из монастыря – о любви» վերնագրով էսսեների ժողովածուում՝ «Նրան պարզապես սրախողխող արեցին» նյութում, գրում է. «Լևոնն այն շատերի թվում էր, ով հավատում էր, որ բոլշևիկները նոր կյանք կբերեն իր Հայրենիքին: Եվ Հրաժարվեց իր համոզմունքներից նույնիսկ մահվան սպառնալիքի տակ: Եվ դրանով իր դեմ ատելության նուպա, դաժան մահ գրգռեց այն անողորմ ժամանակում» (Б а к ш и. 2000, 140):

<sup>72</sup> Л и с и ц и а н. 2002, 8.

վիրակության քարտուղար և դիվանագիտական ցրիչ, այնուհետև դեկտեմբերից 1920 թ. բոլորանվեր աշխատանքը նախ Հովհ. Թումանյանի գլխավորած «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» ռազմապատմական բաժնում որպես քարտուղար, ապա Մայիլյան եղբայրների կազմակերպած գիտատնտեսական արշավախմբում, զ) գինվորական ծառայությունը 1919 թ. կեսերից Սարիղամիշում և 1920 թ. ամռանից՝ Երևանում՝ գլխավոր շտաբին կից, է) ներդրումը Էջմիածնի կուլտուրապատմական հաստատությունների վերակազմակերպման գործում:

Ի դեմս վաղամեռիկ Լ. Լիսիցյանի՝ հայ ժողովուրդը կորցրեց, ըստ ամենայնի, պատրաստված, տաղանդավոր գիտնականի, որի համար Հայաստանի և նրա մշակույթի նկատմամբ անսահման սերն ու նվիրվածությունը եղավ կարճատև կյանքի իմաստը:

Անուշավան Զաքարյան — բ. գ. դ., ՊԲՀ-ի գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ XX դարասկզբի առաջին քառորդի հայ իրականության հարցեր, Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայ-ռուս պատմադրական, մշակութային կապեր: Հեղինակ է 21 մենագրության ու ժողովածուի, ավելի քան 250 հոդվածների և հրապարակումների: patmhandes@rambler.ru

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա - Ղո. 2015, Իմ հիշողությունները / Առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ռ. Գասպարյանի և Ռ. Սահակյանի, Երևան, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, 507 էջ:

Ասատրյան Ա. 2021, Հայ առաջին խոշոր ջութակահարը. — «Գիտություն», № 9, սեպտեմբեր, № 10, հոկտեմբեր:

Ասատրյան Ա. 2022, Հովհաննես Նալբանդյան. հայ առաջին խոշոր ջութակահարը. — ՊԲՀ, № 1, էջ 26–48:

Ավագյան Գ. Գ. 2009, Միքայել Պապաջանյանի հասարակական-քաղաքական գործունեությունը. — «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պ. գ. թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 21 էջ:

Գարեգին Եպիսկոպոս. 1922, Հայ ճարտարապետությունը Ստեփանակու նոր աշխատութեամբ. — «Բանբեր Էջմիածնի գիտական ինստիտուտի», գիրք Ա. եւ Բ., 1921–1922, Էջմիածին, Լուսժողկոմատի տպարան Վաղարշապատում, էջ 282–294:

Զաքարյան Ա. 2001, Լևոն Լիսիցյանը Մայիլյան եղբայրների գիտատնտեսական արշավախմբի մասին. — ՊԲՀ, № 3, էջ 277–285:

Էվոյան Վ. 1973, Փաստաթղթեր Լևոն Լիսիցյանի մասին. — «Բանբեր Հայաստանի արխիվների» (Երևան), № 1, էջ 183–196:

Թերլեմեզյան Ռ. 1936, Նիկողայոս Տիգրանյան (ծննդյան 80-ամյակի առթիվ), Երևան, Պետհրատ, 23 էջ:

Թորամանյան Թ. 2014, Նամականի, Կազմել և ծանոթագրությունները պատրաստել է Նազիկ Թորամանյանը, Երևան, «Գրաբեր» ՍՊԸ, 532 էջ:

Թումանյան Հովհ. 1999, Երկերի լիակատար ժողովածու: Տաս հատորով, հ. 10, Նամակներ 1905–1922, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 771 էջ:



Իսահակյան Ավ. 2020, Երկերի լիակատար ժողովածու տասնչորս հատորով, հ. 13, Նամակներ (1889–1923), Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 720 էջ:

Լիսիցյան Լ. 1922, Հայաստանը ֆիզիքական տեսակետով. – «Բանբեր Էջմիածնի գիտական ինստիտուտի», գիրք Ա. և Բ., 1921–1922, Էջմիածին, Լուսժողկոմատի տպարան Վաղարշապատում, էջ 234–243:

Լիսիցյան Լ. 1972 [Գեղամա լեռների ժայռապատկերներից], Գերմաներենից թարգմանեց Գ. Ա. Տիրացյանը. – ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, էջ 51–57:

Կիրիմյան Ա. Մ. 1991, Լևոն Լիսիցյանի նամակները իր ծնողներին (1915–1920 թթ.) [Ծննդյան 100-ամյակին]. – «Բանբեր Հայաստանի արխիվների» (Երևան), № 3, էջ 145–159:

Հակոբյան Մ. 1964, Հայ մտավորականի ուղին. – «Լենինյան ուղիով» (Երևան), № 1, էջ 96–101:

Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Կազմող, առաջաբանի և ծանոթագրությունների հեղինակ՝ Ա. Զաքարյան, 2005, Երևան, ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 239 էջ:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 221, ց. 1, գ. 38, թ. 25: Թողոն: Ձեռագիր:

«Հայկական համառոտ հանրագիտարան», հ. 4, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2003, էջ 155:

«Հայկական սովետական հանրագիտարան», հ. 9, Երևան, Հայկական սովետական հանրագիտարանի գլխավոր խմբագրություն, 1983, էջ 130:

«Հանրագիտական բառարան», հ. 2, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2018, էջ 604:

Հարությունյան Վ. Մ. 1973, Գիտական մի համագործակցության մասին. – ՊԲՀ, № 2, էջ 89–104:

Ղարիբջանյան Գ. Բ., Վարդանյան Լ. Մ. 1993, Լևոն Լիսիցյան (1892–1992). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, էջ 53–58:

Շանթ Լ. 2017, Երկերի ժողովածու, հ. IX, Նամակներ և բացիկներ, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 712 էջ:

«Ով ով է. հայեր: Կենսագրական հանրագիտարան», հ. 1, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2005, էջ 482:

«Ով ով է. հայեր: Կենսագրական հանրագիտարան», հ. 2, Երևան, Հայկական հանրագիտարան. հրատարակչություն, 2007, էջ 305:

Ստեփանյան Գ. 2016, Համազասպ Սրվանձտյանց, Երևան, «Լուսակն» հրատ., 1088 էջ:

Սուքիասեան Հ. 2013, Վավերագրեր Մայր Աթոռի կրթամշակութային հաստատությունների պետականացման և կուլտուր-պատմական ինստիտուտի հիմնադրման մասին. – «Էջմիածին» (Էջմիածին), Է, հուլիս, էջ 77–78:

Սուքիասյան Հ. Կ. 2014, Եկեղեցու սեփականության բռնագրավումը Խորհրդային Հայաստանում (1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. փետրվար). – ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», № 1, էջ 95–102:

Սուքիասյան Հ. 2015, Կոստանդնուպոլսում Հայաստանի Հանրապետության պատվիրակության գործունեության լուսաբանումը պատվիրակների օրագրություններում (1918 թ. հունիս – նոյեմբեր). – Միջազգային գիտաժողով «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմության և արդիական խնդիրներ)», 1–2 հոկտեմբերի 2014 թ.: Չեկուցումների ժողովածու, Երևան, էջ 193–203:

Վարդանյան Խ. Գ. 1992, Լևոն Շանթի նամակները Ստ. Լիսիցյանին. – «Բանբեր Երևանի համալսարանի», № 1, էջ 121–147, № 3, էջ 121–135:

Տէր-Մինասեան Ե. 1922, Տեղեկագիր էջմիածնի գիտական ինստիտուտի (5 փետրւարի 1921– 1 յունիսի 1922).– «Բանբեր էջմիածնի գիտական ինստիտուտի», գիրք Ա. եւ Բ., 1921–1922, էջմիածին, Լուսժողովրդատի տպարան Վաղարշապատում, էջ 320–329:

Տէր-Յակ. Ս. 1922, Լեւոն Լիսիցեան. – «Բանբեր էջմիածնի գիտական ինստիտուտի», գիրք Ա. եւ Բ., 1921–1922, էջմիածին, Լուսժողովրդատի տպարան Վաղարշապատում, էջ 317–319:

Տիգրանյան Ն. 1981, Հոգիւածներ, հուշեր, նամակներ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 197 էջ:

Арутюнян В. М. 1997, Й. Стржиговский об армянской архитектуре. – ИФЖ, № 1, с. 93–102.

Бакши К. 2000, Из монастыря – о любви / Сб. эссе. Ереван – Москва, Изд. Арк. Варганяна, 288 с.

Бакши К. О Левоне Лисициане. – «Новое время» (Ереван), 30. I. 2002.

Газиян А. 2008, Интересный документ об экспедиции братьев Маилян (1919 г.). – ИФЖ, № 2, с. 244–251.

Гарибджанян Г. Во имя будущего. К 80-летию со дня рождения Л. С. Лисициана. – «Коммунист» (Ереван), 17. II. 1972.

Закарян А. 2003, Александр Кулебякин и Армения. Ереван, Авторское изд., 238 с.

Лисициан Н. Неистовый исследователь и патриот. К 110-летию со дня рождения Левона Лисициана. – «Ноев ковчег» (М.), № 1, февраль, 2002, с. 8.

Мазмания Р. 1978, Никогайос Тигранян. Очерк жизни и творчества (Ред. В. А. Габриелян). Ереван, «Советакан грох», 79 с., 4 с. илл.

Микаелян В. А., Мирзоян С. С. 1990, Участие армян в экономической жизни Восточного Закавказья (вторая половина XIX – первые десятилетия XX вв.). – «Вестник общественных наук» АН АрмССР, № 2, с. 74–81.

Стржиговский Й. 2011, Архитектура армян и Европа, т. 1, кн. первая (пер. П. Амбургера), ред.: М. Асратян, А. Агасян. Ереван, Изд-во «Гитутюн» НАН РА, 364 с. с илл.

Стржиговский Й. 2018, Архитектура армян и Европа, т. 1, кн. вторая (пер. П. Амбургера), ред.: М. Асратян, А. Агасян. Ереван, Изд-во «Гитутюн» НАН РА, 399 с. с илл.

## ТАЛАНТЛИВЫЙ СЫН ЛИСИЦИАНОВ: ЛЕВОН ЛИСИЦИАН

АНУШАВАН ЗАКАРЯН

### Р е з ю м е

*Ключевые слова: Лисицианы, Левон Лисициан, Тифлис, Москва, Вена, Й. Стржиговский, Т. Тораманиян, добровольческие дружины, Петроград, Н. Марр, Л. Ауэр, Константинополь, Ереван, Сарикамыш, Эчмиадзин, Ов. Туманян, Ав. Исаакян, Ал. Кулебякин, К. Бахиш.*

9 января 2022 г. исполнилось 130 лет со дня рождения талантливого сына выдающихся представителей армянской действительности конца XIX –

начала XX в. Лисицианов – этнографа, филолога, историка и общественного деятеля Левона Лисициана.

Короткую, но содержательную, полную событиями жизнь и деятельность Л. Лисициана можно разделить на следующие этапы: а) студенческие годы (университеты Мюнхена, Москвы, Вены), в течение которых зарождалась его научная деятельность: он был консультантом по вопросам армянской культуры выдающегося австрийского историка и архитектора проф. Йозефа Стрижиговского; б) вклад в возглавляемую Й. Стрижиговским научную экспедицию, посетившую Армению с 14 сентября по 4 октября 1913 г.; в) участие в действиях армянских добровольческих дружин в 1914–1915 гг. и полезная для нации деятельность на должности полномочного представителя в Баязете Комитета братской помощи армянским беженцам; г) 1916 год: петроградский период; д) деятельность в Первой Республике Армении: с 13 июня по 1 ноября 1918 г. – в качестве секретаря и дипломатического курьера делегации Республики Армения в Константинополе, затем, с декабря 1918 г. по 1920 г., активная работа в качестве секретаря военно-исторического отдела возглавляемого Ов. Туманяном «Бюро по установлению потерь армян от Всемирной войны» и в научно-экономической экспедиции, организованной братьями Маилянми; е) военная служба в Сарикамыше с середины 1919 г. и в Ереване, при Главном штабе – с лета 1920 г.; ж) вклад в реорганизацию культурно-исторических учреждений Эчмиадзина.

Преданный Родине ученый и гражданин прожил недолгую жизнь: погиб в 1921 г. в Эчмиадзине, в возрасте 29 лет, во время известных февральских событий. В лице Л. Лисициана армянский народ потерял талантливую, высокообразованного интеллигента, для которого любовь и преданность Армении и ее культуре стали смыслом его короткой жизни.

*Анушаван Закарян – д. филол. н., главный редактор ИФЖ, старший научный сотрудник отдела искусства армянской Диаспоры и международных связей Института искусств НАН РА. Научные интересы: вопросы первой четверти армянской действительности XX века, Армянский вопрос и Геноцид армян, армяно-русские историко-литературные и культурные связи. Автор 21 монографии и сборников, более 250 статей и публикаций. patmhandes@rambler.ru*

## THE TALENTED SON OF THE LISITSYANS: LEVON LISITSYAN

ANUSHAVAN ZAKARYAN

### Summary

*Key words: the Lisitsyans, Levon Lisitsyan, Tiflis, Moscow, Vienna, J. Strzygowski, T. Toramanyan, volunteer squads, Petrograd, N. Marr, L. Auer, Constantinople, Yerevan, Sarikamish, Etchmiadzin, Hov. Tumanyan, Av. Isahakyan, Al. Kulebyakin, K. Bakhshi.*

January 9, 2022 marks the 130th anniversary of the birth of Levon Lisitsyan – an ethnographer, philologist, historian and public figure, the talented son of the Lisitsyans – prominent representatives of the Armenian reality of the late 19th and early 20th cc.

The short but meaningful, eventful life and activities of L. Lisitsyan can be divided into the following stages: a) student years (universities of Munich, Moscow, Vienna), during which his scientific activity was born: he was the advisor in Armenian culture to the outstanding Austrian professor of history and architecture Josef Strzygowski; b) contribution to the scientific expedition headed by J. Strzygowski, who visited Armenia from September 14 – October 4, 1913; c) participation in the actions of the Armenian volunteer squads in 1914–1915 and useful activities for the nation in the position of plenipotentiary representative in Bayazet of the Committee of Fraternal Assistance to Armenian Refugees; d) 1916: Petrograd period; e) activities in the period of World War I: from June 13 to November 1, 1918 as a secretary and diplomatic courier of the delegation of the Republic of Armenia in Constantinople, thereupon from December 1918 to 1920, active work as secretary of the military history department of the “Bureau for Establishing the Losses of Armenians from the World War” headed by Hov. Tumanyan and in the scientific and economic expedition organized by the Mailyan brothers; f) military service in Sarikamish from the middle of 1919 and in Yerevan, at the General Staff – from the summer of 1920; g) contribution to the reorganization of the cultural and historical institutions of Etchmiadzin.

The scientist and devoted citizen to the Motherland lived a short life: he died in 1921 in Etchmiadzin, at the age of 29, during the famous February events. In the person of L. Lisitsyan, the Armenian people lost a talented, highly educated intellectual, for whom love and devotion to Armenia and its culture became the meaning of his short life.

*Anushavan Zakaryan – Doctor of Sciences in Philology, Editor-in-Chief of the HPHJ, Senior Researcher at the Department of Arts of the Armenian Diaspora and International Relations at the NAS RA Institute of Arts. Scientific interests: issues of the first quarter of the Armenian reality of the 20th century, the Armenian Question and the Armenian Genocide, Armenian-Russian historical-literary and cultural ties. Author of 21 monographs and collections, over 250 articles and publications. patmhandes@rambler.ru*